Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Վանաձոր
2012

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Նորվեգիայի Հելսինկյան կոմիտե

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Սույն տպագրությունը հնարավոր դարձավ Նորվեգիայի հելսինկյան կողմիտեի աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

1 Ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի նկարագրություն 5

1.1 Պետավտոտեսչության ծառայության հետ քաղաքացիների ունեցած խնդիրների նկարագրություն 9

2 Ռազմավարական դատավարություններ 9

2.1 Կազմակերպության կողմից փաստաբանի ներգրավվմամբ նախաձեռնված գործերի նկարագրությունը 10

2.2 Կազմակերպության կողմից իրականացված գործերի նկարագրություն 14

3 Խուզարկությունների և ձերբակալման վերաբերյալ միջնորդությունների և նրանց բավարարման վիճակագրության վերլուծությունը 17

4 Զանգվածային լրատվության միջոցների մոնիթորինգ 23

5 Փաստաբանների կողմից նախաքննության վերաբերյալ դիտարկման քարտերի ամփոփում 25

6 Ոստիկանության գործողությունների մոնիթորինգ տեղաշարժի ազատության ապահովման բնագավառում 28

Եվրոպական խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցի արձանագրումները 31

Ամփոփում 32

Հավելված1 33

Ներածություն

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2011 թվականի հունվարի 1-ից իրականացնում է «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագիր» Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության և Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ խոշտանգումների, դաժան և անմարդկային վերաբերմունքի կանխարգելումը ՀՀ ոստիկանության բաժիններում ոստիկանության աշխատակիցների կողմից քննչական գործողություններ կատարելիս (բերման ենթարկելու, ձերբակալելու, խուզարկության, հարցաքննության ժամանակ):

Բաց հասարակության հիմնադրամների Բուդապեշտի գրասենյակի աջակցությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացման ծրագրի շրջանակներում ներդրվել և զարգացվում են մարդու իրավունքների խախտման արագ արձագանքման մեխանիզմներ, որի նպատակով ձևավորվել են անվճար իրավական աջակցության ներկայացուցչություններ Լոռու մարզի Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր քաղաքներում: Վերլուծության են ենթարկվել նաև արագ արձագանքման շրջանակներում ձեռք բերված տեղեկությունները: Վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է փաստաբաններից, իրավական աջակցություն ստանալու նպատակով կազմակեևրպություն դիմած քաղաքացիներից, ռազմավարական դատավարությունների պլանավորման և իրականացման ընթացքի մասին եվրոպական խոշտանգումների կանխարգելման կոմիտեի հաշվետվությունների վերլուծության, ՀՀ իրավապահ մարմիններին ուղղված տեղեկատվական հարցումների, զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների, փաստաբանների կողմից նախաքննության վերաբերյալ դիտարկման քարտերի լրացման հիման վրա:

1 Ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի նկարագրություն

Գործ 1:

2011 թվականի մարտի 30-ին Վանաձոր քաղաքի բնակիչ Գ.Գ.-ին և նրա անչափահաս երեխային այցելել են Արտաշատի ոստիկանության աշխատակիցները և ասել, որ իրենց հետ պետք է գնան ոստիկանության Արտաշատի բաժին: 20:30-ից մինչև 22:30-ը նրանք ուղղակի պահվել են ոստիկանությունում, այնուհետև նրանց է մոտեցել մեկը, ով ներկայացել է որպես Հայկազ և տեղեկացրել, որ ինքը քննիչ է և ինչ-որ գումարային հարցերի շուրջ ցանկանում է խոսել: Նույն քննիչը անընդհատ կրկնել է. «Նույնիսկ կալանք է նախատեսվում, և եթե իմ կանչով չգաս՝ կկալանավորենք»: Այս իրավիճակը կրկնվել է երկրորդ անգամ: Քաղաքացին կազմակերպություն դիմել է խորհրդատվություն ստանալու այն մասին, թե ոստիկանության աշխատակիցների քայլերը իրավաչափ են եղել, թե ոչ՝ մտադրություն չունենալով ոստիկանության աշխատակիցների գործողությունները բողոքարկել:

Գործ 2:

2011 թվականի ապրիլի 13-ին Ջ.Հ.-ին զանգահարել և ներկայանալով կանչել են ոստիկանություն (առանց ծնուցագրի, առանց դատավարական կարգավիճակի): Երբ Ջ.Հ.-ն գնացել է ոստիկանություն, զանգահարած ոստիկանության աշխատակիցը իր աշխատասենյակում նրան սկսել է հարցեր տալ ամուսնու մասին՝ վերջինիս այնտեղ պահելով մինչև կեսգիշեր: Ոստիկանը քաղաքացու հետ խոսել է արհամարհական, հեգնական և բարձր տոնով, սպառնացել է, որ ճիշտը չասելու դեպքում միջնորդագիր կուղարկի աշխատանքի վայր և հեռացնել կտա աշխատանքից, կձերբակալի, պահանջել, որ Ջ.Հ.-ն այդ խոսակցության մասին ոչ մեկին ոչինչ չասի: 2011 թվականի ապրիլ 21-ին նույն ոստիկանը նորից զանգահարել է ու հրամայել Ջ.Հ.-ին անպայման ներկայանալ ոստիկանություն: Երբ Ջ.Հ.-ն փաստաբանի հետ գնացել է ոստիկանություն, ոստիկանության աշխատակիցն անհարգալից տոնով է խոսել ոչ միայն Ջ.Հ.-ի հետ, այլ նաև փաստաբանի հետ: Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, գլխավոր դատախազություն և ոստիկանություն: Իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում նկատողություն է հայտարարվել քաղաքացու իրավունքները խախտող ոստիկանության աշխատակցի նկատմամբ:

Գործ 3:

2011 թ. Հուլիսի 19-ին կազմակերպություն դիմած Ս.Բ.ն հայտնել է, որ իր և հարսի միջև տեղի ունեցած կոնֆլիկտը վերածվել է ծեծկրտուքի, որի համար դիմել է ոստիկանություն: Ոստիկանության աշխատակիցները նրան ուղարկել են դատական բժշկի մոտ, ուր այցելությունից հետո դատական բժիշկը տեղեկացրել է Ս.Բ-ին, որ փաստաթղթերը կուղարկի

ոստիկանություն: Կազմակերպության աշխատակցը և Ս.Բ-ն գնացել են քննչական բաժին՝ ստանալու պարզաբանումներ գործի վերաբերյալ, սակայն քննիչը ասել է, որ ինքը հարցերին կպատասխանի գրավոր դիմումի առկայության դեպքում: Համապատասխան հարցում է ուղարկվել քննչական բաժին, որով ստացվել են հուզող հարցերի պատասխանները: Հետագայում քրեական գործը կարճվել է կողմերի հաշտության հիմքով:

Գործ 4:

Քաղաքացուն կանչել են Բազումի ոստիկանություն, որտեղ նա ենթարկվել է խոշտանգումների ոստիկանության աշխատակիցների կողմից: Ոստիկանությունում նա 2 անգամ ուշագնաց է եղել, շտապ օգնություն է կանչվել, սակայն երբ տեսել են, որ վիճակը վատթարանում է, նրան տեղափոխել են հիվանդանոց: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ահազանգ է ստացել դեպքի մասին և այցելել է հիվանդանոց, սակայն գործը չի շարունակվել, քանի որ խոշտանգումների ենթարկված քաղաքացու մայրը համաձայնության է եկել ոստիկանության աշխատակիցների հետ՝ չբողոքարկելու մասին:

Գործ 5:

Կազմակերպություն դիմած քաղաքացին մեզ հայտնել է այն մասին, որ իրեն կանչել են ոստիկանություն հարցաքննության, որից հետո քննիչը վերցրել է նրա անձնագիրը և չի վերադարձրել: Անձնագիրը վերադարձվել է միայն այն ժամանակ, երբ կազմակերպության ներկայացուցիչը քաղաքացու հետ միասին գնացել է Ոստիկանություն:

Գործ 6:

Լոռու մարզի Ստեփանավանի բնակիչ Ս.Ս.-ին զանգահարել են ոստիկանության Վանաձորի բաժնից և կանչել առերեսման: Երբ քաղաքացին ներկայացել է ոստիկանություն, նրան ձերբակալել են ուրիշի գույքը ոչնչացնելու և ոստիկանությունում անպարկեշտ վարք դրսևորելու համար: Կազմակերպության կողմից քաղաքացուն տրամադրվել է փաստաբան ձերբակալության 72 ժամվա ընթացքում իր պաշտպանությունն իրականացնելու համար: Հետագայում քաղաքացու նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որը այժմ գտնվում է դատարանում, քաղաքացու պաշտպանությունն իրականացվում է հանրային պաշտպանի կողմից:

Գործ 7:

Ս.Ռ.-ին 2011 թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամը 16:00-ին, Թումանյան քաղաքի ոստիկանության աշխատակիցները տարել են ոստիկանություն, որտեղ հայհոյելով, վատ վերաբերվելով հարցեր են տվել նրա որդու մասին՝ ոստիկանությունում պահելով մինչև 24:00-ն: 24:00-ից հետո Ս.Ռ.-ն փախել է ոստիկանությունից, սակայն ճանապարհին ոստիկանության վարորդը և մի ոստիկան նորից հայհոյելով, քաշքշելով նրան նստեցրել են մեքենան և տարել ոստիկանություն, որից հետո շատ մեծ դժվարությամբ նրան հաջողվել է ոստիկանությունից գնալ տուն: Հաջորդ օրը ևս՝ սեպտեմբերի 8-ին, ժամը 16:00-ի սահմաններում, նրան տարել են ոստիկանություն՝ քննիչի մոտ

«հարցաքննության», երկարատև հարցաքննությունից հետո նա տուն է վերադարձել միայն ժամը 23:00-ին: Կազմակերպության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:

2011 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժնից ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, համաձայն որի՝ կազմակերպության հաղորդման մեջ նշված դեպքը չի հիմնավորվել, իսկ Ա. Սաքունցը հանցագործության մասին հաղորդումը ներկայացրել է Ս. Ռամազյանի հայտնած տեղեկությունների հիման վրա: Հանցակազմի բացակայության, ինչպես նաև Ա. Սաքունցի և Ս. Ռամազյանի արարքներում հանցակազմ չլինելու հիմքերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գործ 8:

2011 թ. սեպտեմբերի 6-ին Թումանյանի ոստիկանության 3 աշխատակիցներ գնացել են քաղաքացու տուն և խաբելով, թե կալանքից ազատվելուց հետո ոստիկանություն չի ներկայացել, տարել են ոստիկանություն, որտեղ էլ ձերբակալվել է բռնաբարություն կատարելու համար: Ա.Ռ.-ն ոստիկանությունում ենթարկվել է բռնությունների, որի արդյունքում տվել է խոստովանական ցուցմունքներ: Ա.Ռ.-ն կազմակերպության աշխատակցին հայտնել է, որ վախենում է իր նկատմամբ կատարվածի մասին հաղորդում ներկայացնել ոստիկանություն:

Գործ 9:

2011 թ. հոկտեմբերի 6-ին Վանաձոր քաղաքում կատարված դանակահարության համար նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, որպես վկա ոստիկանություն է կանչվել Ա.Ա.-ն, որտեղ մնացել է մինչև գիշերը ժամը 01:00-ն, այնուհետև նրան ոստիկանությունից ազատ են արձակել միայն անձնագիրը ներկայացնելուց հետո՝ պահանջելով հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10:00-ին, ներկայանալ ոստիկանություն: Հաջորդ օրը նա ներկայացել է ոստիկանություն և այնտեղ պահվել մինչև գիշերվա ժամը 01:00-ն: 15 ժամվա ընթացքում նա ոչինչ չի կերել, ենթարկվել է խոշտանգումների՝ ցուցմունքներ ստանալու նպատակով: Ոստիկանությունից նրան թողել են միայն այն ժամանակ, երբ ծնողը հայտարարել է, որ գնում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ: Ա.Ա.-ի ստացած մարմնական վնասվածքներն արձանագրվել են բժշկական հետազոտության արդյունքում: Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն նա հրաժարվել է իր՝ կազմակերպությանը տված դիմումներից և դատախազությունում հայտնել, որ իրեն չեն ծեծել:

Գործ 10:

2011 թ. օգոստոսի 18-ին գողություն կատարելու մեջ կասկածվող և փախուստի մեջ գտնվող քաղաքացու մորը 2 օր կանչել են ոստիկանություն և հարցեր տվել որդու գտնվելու վայրի մասին, ինչպես նաև սպառնացել, որ եթե չասի տղայի գտնվելու վայրը՝ աշխատանքից հեռացնել կտան և թույլ չեն տա, որ ոստիկանությունից դուրս գա: Ոստիկանությունում գտնվելու

ընթացքում մայրը անընդհատ ենթարկվել է հոգեբանական ճնշումների՝ նաև վիրավորանքների տեսքով, սակայն քաղաքացին չի ցանկացել բողոքարկել ոստիկանության աշխատակիցների գործողությունները:

Գործ 11:

Ա.Հ.-ն Ստեփանավանի ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվում է հետապնդումների: Քաղաքում կատարված յուրաքանչյուր հանցագործության դեպքով Ա.Հ.-ին տանում են ոստիկանություն, խուզարկում են բնակարանը, սակայն քաղաքացու կողմից կոնկրետ տեղեկություններ չի տրամադրվել, որպեսզի կազմակերպությունը հնարավորություն ունենա ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Գործ 12:

«Նուբարաշեն» ՔԿՀ տարված կալանավորի մարմնի զննությամբ պարզվել է, որ նրա մարմնի վրա կան բռնության հետքեր, որն արձանագրվել է զննության մատյանում: Մասնավորապես կալանավորը գրառում է կատարել մատյանում՝ նշելով՝ «Վերքերը ստացել եմ դեպքի վայրում, որտեղ որ միլիցեքը ծեծի են ենթարկել ինձ»:

Գործ 13:

Քաղաքացին ծառայության ժամանակ կատարված հանցագործության համար որպես վկա տարվել է ռազմական ոստիկանություն, որտեղ ծեծելով, հոգեբանական ճնշումներով (վախեցնել) ստիպել են ստորագրել հարցաքննության արձանագրություն: Այն հիմք է հանդիսացել մեղադրական դատավճռի կայացման, ինչը հետագայում բեկանվել է և այժմ գտնվում է ընդհանուր իրավասության դատարանում: Քաղաքացին ցանկանում էր իմանալ՝ ինքը հիմա կարող է հրաժարվել նախաքննության ընթացքում ճնշումների արդյունքում իր կողմից ստորագրված ցուցմունքներից:

Եզրահանգումներ

Ներկայացված գործերից կարելի է եզրահանգել՝

ա) ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումները, բռնությունները ձևավորում են քաղաքացիների մոտ անվստահություն նրանց նկատմամբ

բ) որպես հետևանք քաղաքացիները վախենում են ոստիկանության աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի հետևանքով իրենց խախտված իրավունքների պաշտպանությունից

գ) որոշ դեպքերում ոստիկանության ապօրինի գործողություններից տուժած քաղաքացիների նկատմամբ կիրառվում են ճնշումներ բողոքներից հրաժարվելու նպատակով:

1.1 Պետավտոտեսչության ծառայության հետ քաղաքացիների ունեցած խնդիրների նկարագրություն

2011 թ. ընթացքում բողոքարկվել են պետավտոտեսչության աշխատակիցների կողմից կազմված 4 վարչական ակտեր՝ վերադասության, այնուհետև դատական կարգով:

Պետավտոտեսչության ծառայության և քաղաքացիների փոխհարաբերությունների ընթացքում ծագած խնդիրներն ունեն հետևյալ նկարագրությունը.

1. Ոստիկանության աշխատակիցների կողմից ի վնաս վարորդների մեկնաբանությունը, որը հանգեցնում է կոնֆլիկտի, քանի որ չի բացատրվում վարորդի կողմից խախտման բնույթը, ինչպես նաև բողոքարկման կարգը,
2. Պետավտոտեսչության աշխատակիցների կողմից վարորդի նկատմամբ ոչ պատշաճ դիմելաձևը,
3. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ վարչական ակտի կազմումը ավտոմեքենայի հետնամասում,
4. ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը արձանագրող տեսանյութի չտրամադրումը վարորդին,
5. պետավտոտեսչության աշխատակիցի կողմից քաղաքացուց վարորդական իրավունքի վկայականի վերցնելը օրենքով չնախատեսված դեպքերում և քաղաքացուն ճանապարհային ոստիկանություն բերման ենթարկելը,
6. ճանապարհային երթևեկության նշանների բացակայությունը կամ թաքնված լինելը, որը հանգեցնում է ոստիկանության աշխատակիցների և վարորդների միջև վիճաբանության,
7. ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացուն ճանապարհային ոստիկանություն հրավիրելը խախտումը պարզաբանելու համար:

2 Ռազմավարական դատավարություններ

2010–2011 թվականների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է ռազմավարական նշանակություն ունեցող 41 գործ, որից 2010 թ. ընթացքում նախաձեռնված ռազմավարական նշանակություն ունեցող 22 գործերը վերաբերել են.

- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքին՝ 2 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 5 գործ,
- սեփականության իրավունքին՝ 5 գործ,
- կյանքի իրավունքին՝ 3 գործ,
- արդար դատաքննության իրավունքին՝ 5 գործ,
- համայնքի ավագանու որոշման վիճարկմանը՝ 2 գործ:

Ռազմավարական նշանակության նշված 22 գործերից 2-ը վերաբերել է ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելուն:

2011 թվականի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից նախաձեռնվել են ռազմավարական նշանակություն ունեցող 19 գործ, որոնք վերաբերել են.

- ազատ տեղաշարժի, ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքին՝ 2 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 1 գործ,
- արդար դատաքննության իրավունքին՝ 2 գործ,
- կյանքի իրավունքին՝ 1 գործ,
- պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցմանը՝ 7 գործ,
- զինծառայողների և զորակոչիկների իրավունքներին՝ 4 գործ,
- ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքին՝ 1 գործ,
- աշխատանքային իրավունքին՝ 1 գործ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մինչ այժմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվել են 5 գործով գանգատներ, որոնք վերաբերում են.

- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքին՝ 3 գործ,
- սեփականության իրավունքին՝ 1 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 1 գործ:

Վերոհիշյալ գործերի մի մասը նախաձեռնվել են կազմակերպության կողմից: Դրանց մի մասի իրականացումը են փաստաբանական գրասենյակի կամ անհատ փաստաբանի միջոցով, իսկ որոշ գործեր ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է իր ուժերով:

2.1 Կազմակերպության կողմից փաստաբանի ներգրավվմամբ նախաձեռնված գործերի նկարագրությունը

1. Արման Ենգիբարյանի գործը

Ըստ նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 13:05-ի սահմաններում, Արման Սերգեյի Ենգիբարյանը, կատարելով նախապատրաստական գործողություններ Գևորգ Սահակյանի գույքն ավազակային հարձակմամբ հափշտակելու նպատակով, ներկայանալով որպես ջրմուղ-կոյուղու աշխատակից, փորձել է խաբեությամբ ապօրինի մուտք գործել Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 16 շենքում գտնվող՝ Գևորգ Սահակյանին պատկանող թիվ 36 բնակարան, սակայն իր կամքից անկախ չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ Գևորգ Սահակյանը բնակարանի մուտքի դուռը չի բացել և զանգահարել է ՀՀ

ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազոր Նարեկ Սամվելի Պետրոսյանին: Դեպքի վայր ժամանած ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազորներ Աշոտ Ռոբերտի Աղասյանը և Նարեկ Սամվելի Պետրոսյանը, կատարելով իրենց ծառայողական պարտականությունները, անմիջապես ուղևորվել են Մանանդյան փողոց և մոտեցել Գևորգ Սահակյանի մատնանշած անձին, ով հանդիսացել է Արման Ենգիբարյանը: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազորներ Աշոտ Ռոբերտի Աղասյանը և Նարեկ Սամվելի Պետրոսյանը չեն եղել ոստիկանական համազգեստով, սակայն, ըստ իրենց ցուցմունքների, Արման Ենգիբարյանին նրանք ներկայացրել են, որ հանդիսանում են ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցներ, ցույց են տվել վկայական և խնդրել միասին գնալ ոստիկանության բաժին՝ պարզաբանումներ կատարելու համար: Ոստիկանության աշխատակիցները թևանցուկ են արել Արման Ենգիբարյանին և շարժվել դեպի ավտոմեքենան: Հասնելով ավտոմեքենային՝ Արման Ենգիբարյանը հրաժարվել է նստել ավտոմեքենան, դիմադրել է ոստիկանության աշխատակիցներին, հրել, քաշքշել նրանց, ազատել ձեռքերը, որից հետո գոտկատեղից հանել է ատրճանակը, բերել մարտական վիճակի և ուղղելով ոստիկանների վրա՝ սպառնացել է, թե կկրակի ու դիմել է փախուստի: Ոստիկանության աշխատակիցներն ատրճանակները բերել են մարտական վիճակի, որից հետո Աշոտ Աղասյանը զգուշացրել է, որ կկրակի, երկու անգամ նախազգուշական կրակել է օդ և Նարեկ Պետրոսյանի հետ հետապնդել Արման Ենգիբարյանին: Ըստ ոստիկանների ցուցմունքների, Արման Ենգիբարյանը վազելու ընթացքում թեքվել և կրակել է ոստիկանների ուղղությամբ, որի ժամանակ Արման Ենգիբարյանի և Աշոտ Աղասյանի հեռավորությունը եղել 2-3 մետր: Նրա կրակոցից անմիջապես հետո Աշոտ Աղասյանը պատասխան կրակոց է արձակել, որից հետո չսպասելով իր առաջին կրակոցի արդյունքին՝ Աշոտ Աղասյանը երկրորդ կրակոցն է արձակել Արման Ենգիբարյանի ուղղությամբ, որից անմիջապես հետո Արման Ենգիբարյանը բերանքսիվայր ընկել է: Ոստիկանության աշխատակիցներն անմիջապես շտապօգնություն են ահազանգել, սակայն մինչև շտապօգնության գալը որևէ մեկը չի փորձել Արման Ենգիբարյանին առաջին օգնություն ցուցաբերել և նրա մարմինը արնահոսելով մնացել է հատակին ընկած այնքան ժամանակ մինչև շտապօգնության աշխատակիցները ժամանել են դեպքի վայր և Արման Ենգիբարյանին անգիտակից տեղափոխել «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ էլ Արման Ենգիբարյանը գիտակցության չգալով, վիրահատությունը սկսելուց քիչ անց մահացել է: Հատկանշական է, որ Արման Ենգիբարյանին Հատուկ քննչական ծառայությունը տուժող չի ճանաչել, իսկ նրա հարազատներին էլ տուժողի իրավահաջորդներ՝ վերջիններիս չտրամադրելով նախաքննության նյութերը, ինչով իսկ վերջիններիս զրկելով պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից:

2. Գառնիկ Մելիքյանի գործը

2010 թվականի օգոստոսին գումարը մեկ ամսվա ընթացքում տալու պայմանով Գառնիկ Սենիկի Մելիքյանը Զոհրաբ Ծառուկյանի հորից՝ Վարդ Ծառուկյանից, գնել է մեկ գլուխ պանիր, սակայն գումար չունենալու պատճառով չի կարողացել ժամանակին տալ պանրի արժեքը: 2010 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ոստիկանության Տաշիրի բաժնի ՊՊԾ ջոկի ոստիկան Զոհրաբ Ծառուկյանն իր անձնական օգտագործման ավտոմեքենայով ոստիկանության Տաշիրի բաժնի մեկ այլ աշխատակից Էդմունդ Դումիկյանի հետ այցելել է Գառնիկ Մելիքյանի տուն, կրկին հարցրել, թե ինչու է ուշացնում պանրի արժեքը, որից հետո իրեն մեքենայով տարել է Տաշիր և ճանապարհին մի քանի անգամ ապտակել, իսկ հասնելով ոստիկանության Տաշիրի բաժին՝ 2 անգամ հարվածել է Գառնիկ Մելիքյանի կրծքավանդակի վերին ձախ հատվածին և պատճառել մարմնական վնասվածք:

Դեպքին հաջորդող 2-3 օրերի ընթացքում Գ. Մելիքյանը զբաղվել է իր ամենօրյա աշխատանքով, իսկ երրորդ օրը՝ արոտավայրից վերադառնալու ժամանակ, ուժեղ ցավ է զգացել կրծքավանդակի ձախ վերին հատվածում, որը գնալով ուժեղացել է, որից հետո շուրջ 3-4 օր Գառնիկ Մելիքյանը չի կարողացել աշխատանքի գնալ:

2010 թվականի հոկտեմբերի 17-ին Գառնիկ Մելիքյանի տուն են այցելել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի աշխատակիցները, որոնց առաջարկով և օգնությամբ Գառնիկ Մելիքյանը բուժօգնության համար գնացել է Տաշիրի բժշկական կենտրոն, իսկ այնուհետև ներկայացել ոստիկանության Տաշիրի բաժին ու տվել հաղորդում իր հետ տեղի ունեցած դեպքի վերաբերյալ:

2010 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանը, քննարկելով Գառնիկ Մելիքյանի հայտարարության հիման վրա նախապատրաստված նյութերը, որոշում է կայացրել՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2011 թվականի հունվարի 24-ին ՀՀ գլխավոր դատախազին է բողոքարկվել ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

Միևնույն ժամանակ 2011 թվականի հունվարի 24-ին ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետը գրությամբ տեղեկացրել է Գառնիկ Մելիքյանին, որ իր դիմումի կապակցությամբ կատարված ծառայողական քննության արդյունքներով՝ քաղաքացիների միջև ծագած գումարային հարցերին անհարկի միջամտելու համար ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի ՊՊԾ ջոկի ոստիկան, ոստիկանության ավագ սերժանտ Զոհրաբ Ծառուկյանը ենթարկվել է կարգապահական տույժի:

2011 թվականի փետրվարի 2-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ՝ Հ. Հարությունյանի ստորագրությամբ նամակ է ստացվել, որում նշված է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի կարգով հայտնում եմ, որ քաղաքացի Գառնիկ

Մելիքյանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ Ձեր բողոքը 2011 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառով»: Սակայն, գրությանը կից որոշումը չի եղել, որից պարզ կլիներ, թե ինչու է կազմակերպության կողմից ուղարկված բողոքը եղել անհիմն:

2011 թվականի փետրվարի 26-ին ՀՀ ՀՔԾ հկգ քննիչ Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բողոքարկվել է ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

2011 թվականի մարտի 14-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննել է բողոքաբերի բողոքը՝ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի կողմից 25.12.2010 թ. կայացված՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը և մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

2011 թվականի հունիսի 6-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով Գառնիկ Սենիկի Մելիքյանի ներկայացուցիչ Էդմոն Մարուքյանի վերաքննիչ բողոքը՝ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի մարտի 14-ի որոշման դեմ, որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի մարտի 14-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Հատկանշական է, որ ՀՀ վերաքննիչ դատարանում դատական նիստերից մեկի ժամանակ քննիչի կողմից դատարանին էր ներկայացվում նոտարական կարգով հաստատված նամակ Գառնիկ Մելիքյանի կողմից, որում նա դատարանին հաղորդում էր, որ ինքը հրաժարվում է իր փաստաբանի կողմից բերված վերաքննիչ բողոքից և Դատարանին խնդրում՝ բողոքը թողնել առանց քննության: Փաստաբանը միջնորդել էր դատաքննությունը հետաձգել, որպեսզի Գառնիկ Մելիքյանն անձամբ ներկայանա Դատարան և պնդի, որ նամակում ներկայացված տեսակետն իրենն է և պարտադրված չի իրեն: Հաջորդ նիստին Գառնիկ Մելիքյանը ներկայացրել էր գրություն, որում Դատարանին խնդրում էր հաշվի չառնել իր կողմից ներկայացված նախորդ նամակը: ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման դեմ բերված բողոքը՝ շաբլոնային որոշմամբ, առանց հիմնավորման: Ներկայումս գործն ուղարկվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի, այն է վատ վերաբերմունքի և խոշտանգումների փաստի ճանաչման պահանջով:

Նշված ռազմավարական նշանակության գործերից կարելի է եզրահանգել, որ դեռևս ՀՀ ներպետական ատյաններում արդյունավետ քննություն չի իրականացվում ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերով:

2.2 Կազմակերպության կողմից իրականացված գործերի նկարագրություն

1. *Վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների գործը*

Վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից Վանաձորում ժամը 12:00-ին 2010 թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ մաքսային օրենսգրքում ընդունված փոփոխությունների դեմ կազմակերպված բողոքի ակցիային Գյումրի քաղաքից վարորդների մասնակցությանը խոչընդոտելու նպատակով Ջաջուռ գյուղի մոտ ճանապարհը փակվել է Ախուրյանի ոստիկանության աշխատակիցների կողմից ժամը 10:00-ից մինչև 16:30-ը: 16:30-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցները առանց որևէ բացատրության հեռացել են մայրուղուց՝ թույլ տալով վարորդներին շարունակել երթևեկությունը: Ճանապարհը, որը Վրաստան տանող միջպետական ճանապարհ է, ոստիկանության աշխատակիցների կողմից փակվել է այն պատճառաբանությամբ, որ հետագա ճանապարհը և հատկապես Ջաջուռի լեռնանցքն անանցանելի է մոլեգնող ձնաբքի պատճառով: Մինչդեռ մինչ բողոքի ակցիային մասնակցել ցանկացող վարորդները կանգնած են եղել ճանապարհին, հայկական պետհամարանիշներով ավտոմեքենաներն անարգել երթևեկել են Գյումրի-Վանաձոր ճանապարհով: Կազմակերպության արագ արձագանքման խումբն արձանագրել է, որ դադարեցվել է շուրջ հիսուն մեքենաների միակողմանի շարժը Գյումրիից Վանաձոր: Ախուրյանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Գալստյանը հայտնել է հավաքվածներին, որ իրենք ունեն համապատասխան հրաման՝ փակել ճանապարհը և թույլ չտալ վրացական պետհամարանիշներ ունեցող մեքենաներին ուղևորվել Գյումրիից Վանաձոր ակցիային մասնակցելու նպատակով: Ժամը 17:00-ի սահմաններում, երբ մոտ 50 մեքենայից կազմված ավտոշարասյունը մոտեցել է Վանաձոր քաղաքին, ոստիկանության աշխատակիցների կողմից ճանապարհը կրկին փակվել է Վանաձոր-Երևան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Վանաձոր–Ստեփանավան խաչմերուկից դեպի Երևան մոտ 1 կմ հեռավորության վրա: Երթևեկությունը դադարեցվել է 1 ժամով:

Նկատենք, որ ճանապարհին՝ մինչև Վանաձոր քաղաքի մուտք, ոստիկանության ոչ մի մեքենա չի հանդիպել: Ճանապարհը ձյան պատճառով որևէ անանցանելիության խնդիր չի առաջացրել, ավելին՝ Վանաձոր քաղաքին ավելի մոտ հատվածում եղել է ձյունից ամբողջությամբ մաքրված: Ժամը 17:30-ի սահմաններում Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ հավաքվել են Ճանապարհային ոստիկանության մոտ 20 աշխատակիցներ իրենց մեքենաներով: Այնուհետև հենց այդ նույն հատվածում ճանապարհային ոստիկանության մեքենաներին զուգահեռ փողոցի երթևեկելի հատվածի հենց մեջտեղում կանգնել է տրակտոր: Կարճ ժամանակ անց ճանապարհի այդ հատվածը դարձել է անանցանելի: Մոտ 15 րոպե անց ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին միացել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը, ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Ս.Հ.Ավետիսյանը, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ

սպայական վաշտի հրամանատար Մ.Վ.Կարապետյանը: Այս դեպքում ևս ոստիկանության աշխատակիցները չեն ներկայացել, չեն ներկայացրել դեպի Վանաձոր ճանապարհը փակելու պատճառները: Աժ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի այն հարցին, թե ինչու է փակվել ճանապարհը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը պատասխանել է, որ տրակտորը մաքրում է ճանապարհը: Միաժամանակ վերջինս հավելել է. «Ասեք ես իմանամ՝ ուր եք գնում: Չէ, շարասյունով չեք կարող քաղաքով ման գալ, քաղաքում կանգնել չկա, եթե կանգնում եք, ուրեմն մենք տրակտորով կփակենք»: Վերջինս մոտ 5-10 անգամ կրկնել է՝ «Կանգնել չկա»: Մոտ 1 ժամ անց տրակտորը տեղից շարժվել է, և դեպի Վանաձոր ճանապարհը բացվել է: Գործը բողոքարկվել է ՀՀ ներպետական բոլոր ատյաններում և հաջողության չհասնելով՝ այն ուղարկվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

2. *Վլադիմիր Տոնոյանի և Արմեն Մելքոնյանի գործը*

Լոռու մարզի քննչական բաժնում 2009 թվականի սեպտեմբերի 29-ին Գյումրի քաղաքի բնակիչներ Վլադիմիր Տոնոյանի և Արմեն Մելքոնյանի կողմից նախնական համաձայնությամբ կրկին անգամ գողություններ կատարելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: 2009 թվականի հոկտեմբերի 2-ին Վ. Տոնոյանին և Ա. Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: 2009 թվականի նոյեմբերի 8-ին «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ այցելած «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Սաքունցին Վ. Տոնոյանը հայտնել է, որ 2009 թվականի սեպտեմբերի 29-ին ոստիկանության Սպիտակի բաժնում իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից, որոնք եղել են քաղաքացիական հագուստով, կիրառվել են բռնություններ ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները ռետինե մահակներով հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր հատվածներում և կիրառված բռնությունների արդյունքում Վ. Տոնոյանը մի քանի անգամ կորցրել է գիտակցությունը: 2009 թ. նոյեմբերի 11-ին կազմակերպության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում: Լոռու մարզի քննչական բաժնում 2010 թվականի հունվարի 13-ի որոշմամբ որոշվել է Վլադիմիր Տոնոյանի կողմից մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Կազմակերպությունը 2010 թվականի փետրվարի 16-ին բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել վերոհիշյալ որոշումը: Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի մարտի 9-ի որոշմամբ կազմակերպության դիմումը՝ Վլադիմիր Տոնոյանի կողմից մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերացնելու վերաբերյալ բավարարել է: Լոռու մարզի դատախազությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան՝ առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 9-ի վերոհիշյալ որոշման դեմ: 2010 թ. մայիսի 12-ին

Վերաքննիչ դատարանը Լոռու մարզի դատախազության բողոքը բավարարել է մասնակի, բեկանել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը և մերժել է կազմակերպության՝ 2010 թ. հունվարի 13-ին ներկայացրած քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու մասին դիմումը: 2010 թ. հունիսի 1-ին կազմակերպության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք՝ վերը նշված որոշման դեմ: 2010 թ. օգոստոսի 27-ին ՀՀ վճռաբեկ դատարանը կազմակերպության կողմից ներկայացված բողոքը բավարարել է և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ դատարան՝ նոր կազմով քննության: 2010 թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ վերաքննիչ դատարանը Լոռու մարզի դատախազության բողոքը մերժել է և Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ: 2011 թ. փետրվարի 16-ին ՀՀ ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնից նյութերը ուղարկվել է Դիլիջանի քննչական բաժանմունք: 2011 թ. ապրիլի 22-ին Տավուշի մարզի քննչական բաժանմունքի կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: 2011 թ. մայիսի 5-ին կայացված որոշման դեմ դիմում է ներկայացվել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Դիլիջանի քննչական բաժանմունքի քննիչ Ս. Սաղաթելյանի կողմից 22.04.2011 թ. կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին: 2011 թ. հուլիսի 14-ին ներկայացված դիմումը բավարարվել է: 2011 թ. հուլիսի 27-ին Տավուշի մարզի դատախազի որոշմամբ Վ. Տոնոյանին ծեծի ենթարկելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: 2011 թ. սեպտեմբերի 27-ին կայացվել է քրեական գործը կարճելու մասին որոշում: 2011 թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի քննիչ Ս. Սաղաթելյանի քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր և Տավուշի մարզի դատախազություններ: 2011 թ. հոկտեմբերի 27-ին վերը նշված դիմում-բողոքը մերժվել է: 2011 թ. նոյեմբերի 2-ին կազմակերպության կողմից ներկայացվել է դիմում ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի քննիչ Ս. Սաղաթելյանի թիվ 36200111 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին: 2011 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ներկայացված դիմումը մերժվել է: Վերաքննչ դատարանը ևս մերժել է ներկայացված վերաքննիչ բողոքը իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը: Կազմակերպությունը սպառելով ներպետական ատյանները պատրաստվում է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

3. Դերենիկ Գասպարյանի գործը

Դերենիկ Գասպարյանը մահացել էր 2010 թվականի հունիսի 5-ին Չարենցավանի թիվ 5 դպրոցում՝ ուսուցչի՝ դասարանից բացակայության ընթացքում համադասարանցիներ Իշխան և Վրեժ Հարությունյանների կողմից ծեծի ենթարկվելու արդյունքում: Տասնամյա Դերենիկ Գասպարյանի մահվան հետ կապված քրեական գործը հարուցվել է 46 օր ուշացումով և ոչ թե մահվան փաստի առթիվ, այլ «մինչև մահը հասցված թեթև վնասի հատկանիշներ չպարունակող

մարմնական վնասի հատկանիշներով»՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Քրեական գործը հարուցվել է դատաբժշկական փորձաքննության եզրակացության հիման վրա, սակայն նախաքննությամբ չեն պարզվել գործի հանգամանքները և ոչ մեկին մեղադրանք չի առաջադրվել:

2010 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի Չարենցավանի քննչական բաժանմունքի քննիչ Հ. Մկրտչյանը կայացրել է որոշում՝ թիվ 66103110 քրեական գործի վարույթը կարճելու մասին: Քննիչի որոշումը հիմնավորված է եղել հետևյալ փաստարկներով: «Անչափահասներ Իշխան և Վրեժ Հարությունյանների գործողություններն իրենց մեջ պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 18 հոդվածով նախատեսված արարքի հատկանիշներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս հանցանք կատարելու պահին չեն հասել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքին՝ 16 տարեկան, չեն հանդիսանում հանցագործության սուբյեկտ, հետևաբար նրանց նկատմամբ չի կարող իրականացվել քրեական հետապնդում»: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցը ներգրավվել է սույն գործով որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: ՀՀ ոստիկանությունը նյութերով մերժել է քրեական գործի հարուցումը, ինչի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել վերացնել քննիչի որոշումը և պարտավորեցնել հարուցել քրեական գործ: Հետագայում հարուցված քրեական գործը կրկին անգամ կարճվել է և այդ որոշումը ներկայումս բողոքարկվում է դատական կարգով: Ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է ներկայացված բողոքը, սակայն դատախազությունը դատարանի որոշումը բողոքարկել է վերաքննիչ դատարան, որն էլ կայացրել է վերջնական դատական ակտ, բավարարել է դատախազի վերաքննիչ բողոքը՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու մասին, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թ. փետրվարի որոշումը բեկանել է: Դ. Գասպարյանի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքը՝ ՀՀ ոստիկանության Չարենցավանի քննչական բաժանմունքի քննիչ Ա. Բաղդասարյանի կողմից 2011 թ. դեկտեմբերի 7-ին կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու մասին մերժել է:

3 Խուզարկությունների և ձերբակալման վերաբերյալ միջնորդությունների և նրանց բավարարման վիճակագրության վերլուծությունը

Ոստիկանության քննչական բաժինների կողմից անձանց ձերբակալման վերաբերյալ որոշումների, խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանների կողմից նրանց բավարարման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել մի կողմից ոստիկանություն-քաղաքացի հարաբերությունները, մյուս կողմից միչդատական

վարույթում դատական վերահսկողության վիճակը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկվել են տեղեկատվության հարցումներ ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի մարզերի ընդհանուր իրավասության դատարանների խուզարկությունների վերաբերյալ միջնորդությունների քանակի և նրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին: Լոռու մարզի և Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանների կողմից տեղեկատվության հարցումները վերահասցեագրվել են ՀՀ դատական դեպարտամենտ, որն էլ տրամադրել է կազմակերպության կողմից պահանջվող տեղեկատվության մի մասը: Դեպարտամենտի կողմից չի տրամադրվել որոշումների պատճենները՝ համարելով դրանք անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող տեղեկություններ: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է տեղեկատվության տրամադրումը և օրենքի խախտմամբ այն չի վերահասցեագրել ՀՀ դատական դեպարտամենտ:

2011 թ. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննչական բաժիններ են ուղարկվել տեղեկատվություն ստանալու հարցումներ 2010 թ. հունվարից մինչև 2011 մայիսն ընկած ժամանակահատվածում ձերբակալման վերաբերյալ որոշումների ստացման համար: Լոռու և Տավուշի մարզերի քննչական բաժինների կողմից տրամադրվել են ձերբակալված անձանց քանակի մասին տեղեկություններ, սակայն վերստին մերժվել է որոշումների և արձանագրությունների պատճենների տրամադրումը՝ համարելով անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող տեղեկատվություն: Շիրակի մարզի քննչական բաժնի կողմից տեղեկատվությունը չի տրամադրվել:

Բերման ենթարկելու վերաբերյալ որոշումների և կազմված արձանագրությունների պատճենների ստացման հարցով տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն, որն էլ մերժել է տեղեկատվության տրամադրումը անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող և հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ պարունակելու հիմքով:

Ինչպես երևում է պատասխանների բովանդակություններից, թե՛ խուզարկությունների վերաբերյալ դատարանների որոշումները, թե՛ ձերբակալման վերաբերյալ արձանագրությունների որոշումները համարվում են անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող տեղեկություններ, չնայած չի ներկայացվում որևէ հիմավորում, թե ինչու են դրանք համարվում գաղտնի տեղեկություններ և արդյոք որոշման պարունակած ամբողջ բովանդակությունն է համարվում գաղտնիք:

Հետաքրքիր է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունը որպես տեղեկատվության տրամադրման մերժման հիմք է համարել հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ պարունակելու հանգամանքը: Այսպիսով, քաղաքացիների նկատմամբ ոստիկանության անմիջական վերաբերմունքի դրսևորման այնպիսի գործողություններ, ինչպիսիք են խուզարկությունը և ձերբակալումը դուրս է մնում հանրային

վերահսկողության շրջանակներից: Նկատենք, որ խուզարկությունների իրականացման վերաբերյալ միջնորդությունները որպես կանոն բավարարվում են դատարանների կողմից: Նշված վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

N	*Հաստատությունը, որին հասցեագրվել է գրությունը*	*Գրության բովանդակությունը*	*Ստացված պատասխանի բովանդակությունը*
		Խուզարկությունների վերաբերյալ տվյալներ	
1.	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Լոռու մարզի քննչական բաժնի կողմից խուզարկություններ կատարելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների և նրանց բավարարման մասին տվյալներ 2. Խուզարկությունների վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	Գրությունը վերահասցեագրվել է ՀՀ դատական դեպարտամենտ ըստ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության 1. Լոռու մարզի քննչական բաժնի կողմից 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել խուզարկություն կատարելու մասին - 725 միջնորդություն, որից բավարարվել է 711-ը, - 2-ը բավարարվել է մասնակիորեն, - 11-ը՝ մերժվել է, - 1-ը՝ թողնվել առանց քննության: 2. Որոշումների պատճենների տրամադրումը մերժվել է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության հիմքով:
2.	Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Շիրակի մարզի քննչական բաժնի կողմից խուզարկություններ կատարելու վերաբերյալ դատարան ներկայացված	Գրությունը վերահասցեագրվել է ՀՀ դատական դեպարտամենտ, ըստ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության 1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը ՀՀ Շիրակի մարզի

		միջնորդությունների և նրանց բավարարման մասին տվյալներ 2. Խուզարկությունների վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել խուզարկություն կատարելու մասին 553 բոլորը դատարանի կողմից բավարարվել են: 2. Որոշումների պատճենների տրամադրումը մերժվել է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության հիմքով:
3.	Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան	2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Տավուշի մարզի քննչական բաժնի կողմից խուզարկություններ կատարելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների և նրանց բավարարման մասին տվյալներ 2. Խուզարկությունների վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մերժվել է տեղեկատվության տրամադրումը, քանի որ այն խախտում է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:
Ձերբակալման վերաբերյալ տվյալներ			
4.	Լոռու մարզի քննչական բաժին	1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Լոռու մարզի քննչական բաժնի կողմից անձանց ձերբակալելու վերաբերյալ որոշումների քանակի վերաբերյալ տվյալներ 2. Ձերբակալման վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	Ստացված պատասխանի համաձայն՝ -2010 թ. ձերբակալվել են 121 անձինք, -2011 թ. առաջին եռամսյակում՝ 30 անձինք, Քննչական բաժնի կողմից հայտնել են, որ որոշումների պատճենները տրամադրվում են քրեական գործով կողմերին, քանի որ կազմակերպությունը քրեական դատավարության կողմ չի հանդիսանում, հետևաբար որոշումների և

			արձանագրությունների պատճենները չեն կարող տրամադրվել:
5.	Շիրակի մարզի քննչական բաժին	1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Շիրակի մարզի քննչական բաժնի կողմից անձանց ձերբակալելու վերաբերյալ որոշումների քանակի վերաբերյալ տվյալներ 2. Ձերբակալման վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	Շիրակի մարզի քննչական բաժնի կողմից տեղեկատվությունը չի տրամադրվել:
6.	Տավուշի մարզի քննչական բաժին	1. 2010 թ. մինչև 2011 թ. մայիսը Տավուշի մարզի քննչական բաժնի կողմից անձանց ձերբակալելու վերաբերյալ որոշումների քանակի վերաբերյալ տվյալներ 2. Ձերբակալման վերաբերյալ որոշումների պատճենների տրամադրում	Ստացված պատասխանի համաձայն՝ -2010 թ. մինչև 2011 թ. մայիսի 31-ը քննիչների կողմից անձանց ձերբակալելու վերաբերյալ կայացվել է 37 որոշում: 2. Կայացված որոշումները և արձանագրությունները հանձնվել են քրեական դատավարության կողմ հանդիսացող անձանց:
7.	ՀՀ քննչական գլխավոր վարչություն	Խնդրել ենք տրամադրել 2010 թ. մինչև 2011 թ. մայիսի 30-ը Լոռու, Տավուշի, Շիրակի մարզերի քննչական բաժինների կողմից կայացված բերման ենթարկելու մասին որոշումների և կազմված արձանագրությունների պատճենները:	Տեղեկատվության տրամադրումը մերժվել է:

Ձերբակալությունների և խուզարկությունների պրակտիկաի ավելի ամբողջական ուսումնասիրության նպատակով վերլուծության են ենթարկվել նաև ՀՀ վիճակագրական վարչության կողմից ստացված տվյալները (տես՝ աղյուսակ 2 և աղյուսակ 3): Ինչպես երևում է աղյուսակ 2-ից 2008-2010 թվականների կտրվածքով յուրաքանչյուր 10 ձերբակալվածից միային

1-ն է ազատվում, այսինքն նրա նկատմամբ միջնորդություն չի ներկայացվում խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին:

Աղյուսակ 2

Ձերբակալված անձանց թվաքանակը, 2008-2010 թթ.						
	2008		2009		2010	
	թիվ	տոկոս	թիվ	տոկոս	թիվ	տոկոս
Ձերբակալված անձանց թվաքանակը	1390	100%	1723	100%	1637	100%
Ձերբակալումից ազատված անձանց թվաքանակը	161	11.6%	187	10.9%	193	11.8%
այդ թվում՝		100%		100%		100%
չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով արգելված արարքը կատարելու մասին կասկածը	23	14.3%	18	9.6%	12	6.2%
բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը	79	49.1%	93	49.7%	130	67.4%
լրացել է ձերբակալման օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել	48	29.1%	76	40.6%	51	26.4%
Արգելանքից ազատվածներից քրեական պատասխանատվության չենթարկված անձանց թվաքանակը	32	19.9%	20	10.7%	13	6.7%

Խուզարկության արդյունքների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում: Դրանք ցույց են տալիս, որ որպես կանոն դատարան ներկայացված բոլոր միջնորդությունները շատ քիչ բացառություններով բավարարվում են: Նկատենք, որ հանցագործությունների բացահայտման ընթացքում լայնորեն կիրառվում են օպերատիվ տվյալների հիմնավորմամբ խուզարկություն կատարելու միջնորդությունները քաղաքացիների բնակարաններում, որոնք որևէ կարգավիճակ չեն ունեցել քրեական գործում:

Աղյուսակ 3

Խուզարկության արդյունքները, 2008-2010 թթ.						
	2008		2009		2010	
	թիվ	տոկոս	թիվ	տոկոս	թիվ	տոկոս
Խուզարկություն կատարելու համար դատարան ներկայացրած միջնորդությունների քանակը	**2688**	**100%**	**3539**	**100%**	**3433**	**100%**
այդ թվում՝						
բնակարանի խուզարկություն կատարելու համար	2575		3436		3252	
բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար	113		103		181	
Դատարանը բավարարել է խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը	***2676***	***99.6%***	***3513***	***99.3%***	***3411***	***99.4%***
այդ թվում						
բնակարանի խուզարկություն կատարելու համար	2567		3412		3233	
բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար	109		101		178	
Դատարանը մերժել է խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը	***12***	***0.4%***	***26***	***0.7%***	***22***	***0.6%***
այդ թվում						
բնակարանի խուզարկություն կատարելու համար	8		24		19	
բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար	4		2		3	

4 Զանգվածային լրատվության միջոցների մոնիթորինգ

2011 թվականի ընթացքում դիտարկվել է էլեկտրոնային 11 անուն մամուլի միջոցներով տարածված նյութերը՝ նպատակ ունենալով վեր հանել զանգվածային լրատվության միջոցների կողմից ոստիկանության գործելաոճի ներկայացումը: Դիտարկման արդյունքները ներկայացված են ստորև՝ աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների վերլուծություն													
Խախտման տեսակը	1in.am	a1plus.am	a ravot.am	a ysor.am	hzh.am	hetq.am	hraparak.am	lragir.am	news.am	azatutyun.am	henaran.am	**Ընդամենը**	**տոկոս**
Բերման ենթարկելու ժամանակ բռնություն	17	1	6	5	3	3	4	21	1	2	2	**65**	31.0%
Բռնության գործադրում ցուցմունքների ստացման նպատակով	2						3	4		2	4	**15**	7.1%
Բերման ենթարկում	5	5	4	3	4		1	4	2	6	7	**41**	19.5%
Բռնություն	6	4	1	3	1	4		9	6			**34**	16.2%
Ընդհանուր գործունեություն	3			2					1	1		**7**	3.3%
Տեղաշարժի ազատություն	3	10	1	1	1			1	1			**18**	8.6%
Ժողովների, հավաքների և միավորումների ժամանակ սահմանափակումներ	1							1				**2**	1.0%
Ձերբակալություն		1										**1**	0.5%
«Անմիջական կոնտակտի» հայտարարություն		1										**1**	0.5%
Ձերբակալված անձանց պահելու վայրերում բռնությունների գործադրման վերաբերյալ			1									**1**	0.5%
Բռնության գործադրմամբ ձերբակալության իրականացում				1								**1**	0.5%
Ոստիկանը կատարել է գողություն քաղաքացու բնակարանից					1							**1**	0.5%
Քաղաքացուն պատճառվել է մահ ոստիկանական մեքենայից դուրս ընկնելու հետևանքով					1							**1**	0.5%
Ոստիկանության աշխատակիցները գողացել են շուրջ 2000 թռուցիկ					1							**1**	0.5%
Ոստիկանության աշխատակցի կողմից բանկ թալանելու փորձի վերաբերյալ					1							**1**	0.5%
Կաշառք տալու պահանջի վերաբերյալ						1						**1**	0.5%
Անօրինական ազատազրկում						1	2			1	6	**10**	4.8%
Ցուցմունք տալուն հարկադրել						1						**1**	0.5%
Ստուգումներ ոստիկանությունում							1					**1**	0.5%
Անգործություն							1					**1**	0.5%
Սպառնալիքներ								1	1	2		**4**	1.9%
Ոստիկանության համակարգի բարեփոխումների վերաբերյալ								1				**1**	0.5%
Քաղաքացիների կողմից ոստիկանության նկատմամբ անվստահության վերաբերյալ								1				**1**	0.5%
Ընդամենը	**37**	**22**	**13**	**15**	**13**	**10**	**12**	**43**	**12**	**14**	**19**	**210**	**100%**

5 Փաստաբանների կողմից նախաքննության վերաբերյալ դիտարկման քարտերի ամփոփում

Լոռու մարզում փաստաբանական գործունեություն ծավալող 4 փաստաբանների կողմից լրացված 17 վերլուծական քարտերի ամփոփման արդյունքում վեր են հանվել առավել հաճախ տեղ գտնող խախտումները, որոնք թույլ են տրվում քննչական բաժիններում.

- բերման ենթարկելու և ձերբակալելու մասին համապատասխան որոշում չի կայացվել[1],
- բերման ենթարկվողին չեն ներկայացրել այն գործը, որի շրջանակներում անձը բերման է ենթարկվել ու ձերբակալվել, չի ներկայացվել բերման ենթարկելու և ձերբակալելու պատճառը, ինչպես նաև նրա դատավարական կարգավիճակը[2],
- բերման ենթարկվողի հասցեին վիրավորական արտահայտություններ են արվել՝ որպես հանցագործություն կատարած անձի, որի մասին նա արձանագրության մեջ նշում կատարելու հնարավորություն չի ունեցել[3],
- ձերբակալման ժամ ու արձանագրության մեջ նշված ժամը տարբեր է[4],
- կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը եղել է չպատճառաբանված[5],

---

[1] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

[2] ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին: Ձերբակալության մասին անհապաղ տեղեկացվում է ձերբակալվածի ընտանիքը կամ նրա կողմից ընտրված անձը: Ձերբակալվածը պարտավոր չէ առանց իր պաշտպանի մասնակցության որևէ ցուցմունք տալ:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է:

[3] ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության.....:

[4] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131[1] հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ձերբակալման արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

[5] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված,

- ճանաչող անձը նախքան ճանաչման գործողությունը ծանոթացել է նախաքննության նյութերին:
- ձերբակալման արձանագրության պատճենը ձերբակալվածին չի տրամադրվել[6],
- անձը հարցաքննության կանչվել է առանց ծանուցագրի[7],
- իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ տալուց ազատ լինելու իրավունք[8],

- անձը ձերբակալվել է խաբությամբ, նրան ոստիկանությունից զանգահարել և հրավիրել են առերես հարցաքննության նա ներկայացրել է, որից հետո նրան ասել են, որ առերեսումը պետք է կատարվի ՀՊՎ-ում և տարել են այդտեղ, հասնելով խցի մոտ նրան քննիչն ասել է, որ ձերբակալված է և քաշքշելով, անպատիվ խոսքերով, վիրավորելով, հրելով ձերբակալել են[9],
- անձին չի ներկայացվել այն գործը, որի շրջանակներում բերման են ենթարկում[10],

---

բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

[6] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

ՀՀ քր. դատ. օր. 131[1] հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին:

[7] ՀՀ քր. դատ. օր. 205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները»:

Տվյալ պարագայում կարող ենք ասել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից տեղի է ունեցել քրեադատավարական նորմի խախտում և անձը հարցաքննության է կանչվել առանց ծանուցագրի և համապատասխան կարգավիճակի:

[8] ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ «Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ:….»:

ՀՀ քր. դատ. օր. 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»:

[9] Ձերբակալման ՀՀ ՔԴՕ 128-րդ հոդվածի 1-ին մասում տրված բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը:

[10] ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին: Ձերբակալության մասին անհապաղ տեղեկացվում է ձերբակալվածի ընտանիքը կամ նրա կողմից ընտրված անձը: Ձերբակալվածը պարտավոր չէ առանց իր պաշտպանի մասնակցության որևէ ցուցմունք տալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդեվածի 4-րդ մասի համաձայն՝«Յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն

- անձին չի բացատրվել մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալու իրավունքը[11],
- առանց ծայրահեղ անհրաժեշտության հարցաքննություն է կատարվել գիշերային ժամի[12],
- խախտվել է անձի պաշտպանության իրավունքը[13],

- ձերբակալման արձանագրության մեջ անձը ցանկացել է միջնորդություն անել, /պաշտպան ունենալու մասին/, սակայն թույլ չի տրվել[14],
- ձերբակալվածին իր իրավունքների մասին գրավոր ծանուցում չի տրվել, իրավունքները և պարտականությունները չի բացատրվել[15],

---

հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է»:

[11] ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ «Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ:….»:
ՀՀ քր. դատ. օր. 20-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»:
Անձին իր այդ իրավունքի մասին չբացատրելը հանգեցնում է անձի ՀՀ Սահմանադրությամբ և քր. դատ. օրենսգրքով երաշխավորված իրավունքների խախտման:

[12] ՀՀ քր դատ. օր. 1881-րդ հոդվածի համաձայն՝ քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի:
Այս դեպքում մինչև փաստաբանի ներգրավելը անձը հարցաքննվել է նաև գիշերային ժամի, սակայն առանց որևէ հիմնավորման, որ այդ պահին հարցաքննությունը անհետաձգելի է եղել:

[13] ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»:
Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները:
Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝«Յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն»:
Կասկածյալի, մեղադրյալի կողմից ցանկություն հայտնելու կամ այն դեպքում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես նաև սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:
ՀՀ քր. դատ. օր. 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝«Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իր իրավունքը»:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը:

[14] ՀՀ քր. դատ. օրենսգրքի 131[1]–րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

[15] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում:

- հարցաքննության ժամանակ քննիչն անձին ստիպել է ցուցմունքները գրել ըստ իր թելադրածի[16],
- ոստիկանության աշխատակիցներն անձին բերման ենթարկելու որևէ հիմք չեն ներկայացրել[17],
- անձը խաբեությամբ կանչվել է ոստիկանություն և ձերբակալվել[18],
- քննիչի կողմից անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել[19]:

6 Ոստիկանության գործողությունների մոնիթորինգ տեղաշարժի ազատության ապահովման բնագավառում

2011 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից, բացի ազատ տեղաշարժի իրավունքի խախտումների արձանագրումից, ձեռնարկվել են նաև համապատասխան գործողություններ՝ խախտումներ թույլ տված ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների և պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով: Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ Լոռու մարզի դատախազություն են ներկայացվել երեք հաղորդում, երկու հայտարարություն և մեկ դիմում:
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից հանցագործության մասին ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված 3 հաղորդումներից 2-ը միացվել են իրար՝ ընթացքը համատեղ լուծելու համար, քրեական գործի քննությունը կատարել է Լոռու մարզի քննչական բաժինը: Երկու դեպքում էլ ներկայացված հաղորդումների հիման վրա կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որոնք բողոքարկվել են ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով:

---

[16] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «….արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:
[17] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝«Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:
[18] Ձերբակալման՝ ՀՀ քր. դատ. օր. 128-րդ հոդվածի 1-ին մասում տրված բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը:
[19] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

Կազմակերպությունը, բողոքարկելով ՀՀ ոստիկանության քննչական մարմնի քրեական գործ չհարուցելու մասին որոշում, վիճարկում էր այն հանգամանքը, որ ներկայացված հաղորդումների վերաբերյալ չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:
Ներպետական դատական ատյաններում կազմակերպությունը դրական արդյունքի չի հասել: Ներկայումս ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի վերաբերյալ դիմում է պատրաստվում Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացնելու համար:
2011 թ. ապրիլի 28-ին (առավոտյան ժամը 08:00-12:30-ի սահմաններում), սեպտեմբերի 30-ին (ժամը 09:30-11:00-ի սահմաններում) և հոկտեմբերի 1-ին (առավոտյան ժամը 10:00-13:00-ի սահմաններում)՝ ՀԱԿ-ի հերթական հանրահավաքի օրերին, Լոռու մարզի ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և Տաշիր քաղաքներից ուղևորափոխադրումները դադարեցվել են կամ իրականացվել են սահմանված գրաֆիկների խախտումներով: Խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից ապրիլի 28-ին և հոկտեմբերի 1-ին հայտարարություններ են ներկայացվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն և ՀՀ Լոռու մարզի մարզպետարան՝ Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ չիրականացնելու վերաբերյալ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պահանջ է ներկայացվել նշված քաղաքներից դեպի Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունների լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ, քանի որ ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունները, ստանալով լիցենզիա, պարտավորվում են ուղևորափոխադրումներ իրականացնել նախապես հաստատված գրաֆիկով և ծավալներով:
2011 թ. ապրիլի 28-ի հայտարարության վերաբերյալ Լոռու մարզպետարանի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ցուցաբերվել է անգործություն և մինչև մայիսի 31-ը հայտարարության կապակցությամբ որևէ միջոցառում չի ձեռնարկվել: Ավելին, 2011 թ. մայիսի 31-ին՝ առավոտյան ժամը 08:00-12:50-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցվել են, Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունը դրսևորել է նույնատիպ խախտում, որը հանգեցրել է ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի խախտմանը:
2011 թ. ապրիլի 28-ին ուղարկված հայտարարության վերաբերյալ կազմակերպությունը, չստանալով պատասխաններ, մայիսի 31-ին վարչական բողոք է ուղարկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Լոռու մարզպետի անգործությունը վերացնելու և պարտավորեցնելու 2011 թ. ապրիլի 28-ին կազմակերպության ներկայացրած հայտարարության վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:
Վարչապետին ուղղված վարչական բողոքը ՀՀ վարչապետի 2011 թ. հունիսի 8-ի հանձնարարականով վերահասցեագրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը:

Նախարարության կողմից 2011 թ. հունիսի 22-ին ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վարչական բողոքում նշված փաստարկները ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անգործության վերաբերյալ անհիմն են, իսկ հայտարարության մեջ նշված պահանջի՝ նշված երթուղիներին սպասարկման իրավունքից զրկելու վերաբերյալ, իրավական հիմքերը բացակայում են՝ իրավախախտումը նույն օրը վերացվելու պատճառով:
Հոկտեմբերի 1-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից հայտարարություն է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մանուկ Վարդանյանին և Լոռու մարզի մարզպետ Արթուր Նալբանդյանին, Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ալավերդի քաղաքներից մայրաքաղաք ուղևորափոխադրումները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պատասխանատու անձանց կողմից ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը խախտելու և խախտումները կանխարգելելու ուղղությամբ անգործություն դրսևորելու վերաբերյալ:
2011 թ. հոկտեմբերի 1-ին կազմակերպության հայտարարության կապակցությամբ հոկտեմբերի 11-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ նշված քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները նախազգուշացվել են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան ուղևորափոխադրումներ իրականացնելու համար: Համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի՝ նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախտումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կզրկվի երթուղու սպասարկման իրավունքից:
2011 թ. հոկտեմբերի 10-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն պարզելու համար՝

- ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող քանի կազմակերպություն է գործում ՀՀ-ում /ըստ մարզերի/
- 2011 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 9-ը դրանցից որոնք են ենթարկվել վարչական պատասխանատվության,
- որ նորմի խախտման հիմքով և ինչ չափի:

2011 թ. հոկտեմբերի 24-ին Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է գրություն, որով ներկայացվել է ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը և տեղեկատվություն այն մասին, որ 2011 թ. սեպտեմերի 30-ից մինչև հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում 11 ընկերությունների նկատմամբ կազմվել է 14 վերահսկողական արդյունքների ամփոփման արդյունքների արձանագրություններ. հիմնականում երթուղու ձախողման պատճառով կազմակերպությունները պատասխանատվության են ենթարկվել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով (5000 ՀՀ դրամ):

Հոկտեմբերին նախազգուշացում ստացած ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից նոյեմբերի 25-ին հերթական անգամ չեն իրականացվել ուղևորափոխադրումներ դեպի Երևան: 2011 թ. նոյեմբերի 28-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիմում է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին երթուղու սպասարկման իրավունքից զրկելու պահանջով՝ նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու և մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու հիմքով:

2011 թ. դեկտեմբերի 29-ին Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՀ տրանսպորտի տեսչության Լոռու մարզի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից վերահսկողության գործառույթների իրականացման արդյունքում պարզվել է, որ 2011 թ. նոյեմբերի 25-ին Ստեփանավան, Սպիտակ և Ալավերդի քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումները ժամը 14:00-ից հետո ուղևորահոսքի ծանրաբեռնվածության պատճառով սպասարկվել են չվացուցակի որոշակի խախտումներով՝ օգտագործելով չվացուցակով մինչև ժամը 14:00-ն գրեթե բոլոր չվերթերի համար նախատեսված բոլոր տրանսպորտային միջոցները: Հետևաբար, ըստ գրության՝ կազմակերպության կողմից ներկայացված «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված հայտարարություններում բարձրացված դեպքերի հետ կապված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից վարչական պատասխանատվության են ենթարկվել մի շարք ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ, այնուամենայնիվ ազատ տեղաշարժի իրավունքի խախտումները չեն վերացվել:

Եվրոպական խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցի արձանագրումները

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) Հայաստանի վերաբերյալ 2010 թ. զեկույցում (տե՛ս հավելված 1) ուշադրություն է դարձվում ոստիկանության աշխատակիցների կողմից չարաշահումների անթույլատրության, իսկ դրանց դեպքում պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությանը: Զեկույցը կոչ է անում Հայաստանի իշխանություններին պարբերաբար բոլոր ոստիկաններին հստակ ուղերց հղել «վատ վերաբերմունքի նկատմամբ զրո հանդուրժողականության» մասին: Խոշտանգումների կոմիտեն արձանագրում է, որ ոստիկանության անձնակազմին պետք է հիշեցվի, որ պահանջվածից առավել ուժ չպետք է գործադրվի ձերբակալումը իրագործելիս: Միաժամանակ որևէ արդարացում չի կարող լինել արդեն ձերբակալված անձին խփելու համար և պետք է հստակ ճանաչվի արգելանքի տակ գտնվող անձանց մարդկայնորեն վերաբերվելը: Անդրադառնալով ձերբակալման մասին

տեղեկացվելու իրավունքին՝ ԽԿԿ-ն գտնում է, որ այն պետք է գրավոր արձանագրվի, իսկ դրա ցանկացած հապաղում պետք է գրանցվի՝ նշելով դրա պատճառները: Միևնույն ժամանակ այդ հապաղումը պետք է ունենա ժամանակային հստակ սահմանափակում:

Ամփոփում

Այսպիսով, վերլուծելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ոստիկանության ծառայության և նրա աշխատակիցների հետ քաղաքացիների հարբերություններում մարդու իրավունքների վիճակը՝ կարելի է ձևակերպել հետևյալ խնդիրները.

1. ոստիկանության աշխատակիցների կողմից շարունակվում են մարդու իրավունքների խախտումները քաղաքացիների բերման ենթարկելու, խուզարկության կատարման և ձերբակալության վերաբերյալ որոշումների ընդունման և իրականացման գործընթացներում
2. ոստիկանության բաժանմունքներում շարունակվում են քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի պրակտիկան՝ բռնությունների, հոգեբանական և ֆիզիկական բռնությունների և այլ անօրինական գործողությունների միջոցով
3. շարունակվում է քաղաքացիների մոտ անվստահությունը և վախը, հատկապես ոստիկանության աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ներկայացման հետ կապված,
4. պատշաճ քննություն չի իրականացվում ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քաղաքացիների բողոքների վերաբերյալ և իրականացված ծառայողական քննության արդյունքները պատշաճ չի ներկայացվում քաղաքացուն, չեն տրամադրվում եզրակացությունները,
5. պարբերական բնույթ է կրում քաղաքացիների իրավական աջակցություն ստանալու իրավունքի խախտումը բերման ենթարկելու, խուզարկություն կատարելու և ձերբակալելու ընթացքում,
6. ոստիկանության կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերով չի իրականացվում բազմակողմանի լրիվ օբյեկտիվ քննություն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում:

Խոշտանգումների կանխարգելման կոմիտե, 2010		
Մեջբերումներ զեկույցից	Առաջարկություններ	ՀՀ կառավարության պատասխանը
Պարզվեց, որ 72 ժամվա սահմանափակումը հիմնականում պահպանվել է:	Քայլեր ձեռնարկել, որպեսզի ապահովեն, որ կալանքի մասին արձանագրությունը կազմվի առանց հապաղման, ձերբակալումից անմիջապես հետո: Այնուհետև, պետք է ձեռնարկվեն քայլեր ապահովելու համար, որ կալանքի մասին արձանագրությունները վերաբերում են ձերբակալման ժամանակին և ոստիկանության բաժանմունքին (ի լրումն կալանքի մասին արձանագրություն կազմելու սկզբի ժամանակի):	Դեռեւս 2006 թ. ոստիկանության իրավաստեղծ նախաձեռնությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվել է 131.1. հոդվածով, որը երաշխավորում է փաստացի ձերբակալված անձանց նկատմամբ 3 ժամվա ընթացքում քրեական գործ հարուցելու եւ դատավարական ձերբակալում իրականացնելու հնարավորությունը: Հարցի հետ ուղղակիորեն առնչվում է ոստիկանության կողմից կիրառվող բերման ենթարկելու գործողության իրավաչափությունը, որը գործնականում չի դիտվում իբրեւ ձերբակալում՝ դրանից բխող բացասական հետեւանքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, բերման ենթարկելու պահից ձերբակալման արձանագրություն կազմելու գործընթացը կկանոնակարգվի նոր օրենսդրության շրջանակներում: Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող

		բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն՝ կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ /բուկլետներ/:
2010 թ. այցելության ընթացքում պարզվեց, որ արգելանքի տակ վերցված անձանց մեծամասնությունը բանտ է տեղափոխվել 3 օրվա ընթացքում:		
	Հայաստանյան իշխանությունները ապահովեն, որ արգելանքի տակ գտնվող անձինք արագ տեղափոխվեն բանտ: Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի տեսակետով, ցանկացած հետագա անհրաժեշտ հարցաքննություն պետք է, որքանով որ դա հնարավոր է, կատարվի բանտում:	ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: Բացի այդ, «Ձերբակալված եւ կալանավորված անձանաց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-

		րդ հոդվածի համաձայն, քննչական գործողություններ կատարելու կապակցությամբ կալանավորվածներին պահելու վայրից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչեւ 3 օր տեւողությամբ: Նշված բացառիկ դեպքերից բացի, կալանավորված անձանց ՁՊՎ-ներում օրենքով նախատեսված ժամկետից ավել պահելու դեպքերը կանխելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի կողմից արձակվել են 29.01.2009 թ. թիվ 3-2 ցուցումը եւ 14.10.2009 թ. թիվ 2625-Ա հրամանը: Մասնավորապես, վերը նշված հարամանով ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները բացառելու համար՝ 1/ գիշերային ժամերին ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերից դուրս պահելու դեպքերը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի, 2/ գիշերային ժամերին հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց հետ օպերատիվ հարցումների կամ

		կասկածյալի /մեղադրյալի/ մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացումը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի, 3/ հանցանք կատարելու մեջ կասկածվող եւ բերված անձին առանց կասկածյալի դատավարական կարգավիճակի 3 ժամից ավելի պահելը, 4/ կալանավորված անձանց երեք օրվանից ավելի ձերբակալվածներին պահելու վայրերում պահելը, եթե դա պայմանավորված չէ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ օրենքի պահանջներին համապատասխան կալանավորվածներին պահելու այլ վայրեր տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով տեղափոխելու անհնարինությամբ:
	Առաջարկում է, որ Հայաստանյան իշխանությունները բոլոր ոստիկաններին հստակ ուղերձ հղի, շարունակական վերապատրաստման միջոցով, որ նրանք, ովքեր կչարաշահեն իրենց պաշտոնը, որպեսզի գումար ստանան ազատազրկման մեջ գտնվող մարդկանցից կամ նրանց բարեկամներից, կենթարկվեն քրեական պատասխանատվության: Առավել ընդհանուր, այս առումով վկայակոչվում են Կոռուպցիայի	Լիովին գիտակցելով խնդրո առարկայի կարևորությունը՝ ՀՀ ոստիկանության պետի 09.12.2009թ. թիվ 3140-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Միևնույն ժամանակ, ՀՀ ոստիկանության ղեկավարության նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության

	դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի պետությունների խմբի առաջարկությունները:	Ակադեմիայում եւ Ուսումնական կենտրոնում դասավանդվող առարկաների ցանկում ներառվել է «Ոստիկանության էթիկա» ուսումնական առարկան: Բացի այդ, թե՛ ՀՀ-ում և թե՛ արտասահմանյան մի շարք երկրներում ոստիկանության ծառայողները շարունակաբար մասնակցում են նմանատիպ թեմաներով կազմակերպվող դասընթացների: Նշված թեմաները ընդգրկված են նաեւ ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների թեմատիկ պլաններում: Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվում է ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց: Այս ամենով հանդերձ, ՀՀ ոստիկանությունը հայտնում է իր պատրաստակամությունը ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսեւորումների վերաբերյալ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի պատվիրակության կողմից առարկայական տեղեկատվություն տրամադրելու դեպքում կատարել ծառայողական քննություններ եւ մեղավոր ծառայողներին ենթարկել

		համարժեք պատասխանատվության:
Պատվիրակությունը լսեց զգալի քանակով վստահելի և հետևողական հայտարարություններ կալանավորված անձանց հետ վերջերս պատահած ֆիզիկական վատ վերաբերմունքի մասին ոստիկանության օպերատիվ անձնակազմի, երբեմն էլ բարձրաստիճան սպաների կողմից, նախնական հարցաքննությունների ժամանակ (այսինքն, մինչև կալանքի մասին արձանագրության կազմելը): Բացի այդ, շատերը, այդ թվում նրանք, ովքեր հարցաքննվել են ոստիկանության կողմից որպես վկաներ, պնդեցին, որ նրանք ենթարկվել են հարցաքննության ճնշող մեթոդների (օր. երկարատև հարցաքննություն միաժամանակ մինչև 8 հարցաքննողի կողմից; ֆիզիկական վատ վերաբերմունքի կամ պատժի լինելու կամ ընտանիքի անդամների նկատմամբ հետևանքների	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին պարբերաբար բոլոր ոստիկաններին, հայտարարության ընդունման միջոցով, սկսած ամենաբարձր աստիճանից, «վատ վերաբերմունքի նկատմամբ զրո հանդուրժողականության» հստակ ուղերձ հղել: Որպես այդ հայտարարության մի մաս, պետք է պարզ դարձվի, որ ցանկացած ոստիկան, ով որևէ կերպ կկատարի, կօժանդակի և կդրդի կամ կհանդուրժի վատ վերաբերմունք, խստորեն կպատժվի: Այնուհետ, ոստիկանության անձնակազմը պետք է հիշեցվի, որ պահանջվածից առավել ուժ չպետք է գործադրվի ձերբակալումն իրագործելիս և երբ ձերբակալված անձինք արդեն վերահսկողության տակ են վերցվել, չի կարող որևէ արդարացում լինել նրանց խբելու համար: Միևնույն ժամանակ, արգելանքի տակ գտնվող անձանց մարդկայնորեն վերաբերվելը պետք է հստակ ճանաչվի:	ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս՝ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության: Այսպես, 2010 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից եւ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ 81 բողոք /2009 թ.՝ 245/, որոնց քննությամբ հիմնավորվել են 19-ը /2009 թ.՝ 37/: Կատարված ծառայողական քննությունների արդյունքում ոստիկանության 23 ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության /2009 թ.՝ 51/, 4 ծառայող՝ քրեական պատասխանատվության /2009 թ.՝ 2/: Ի դեպ, քրեական պատասխանատվության կանչված 1 ոստիկանության ծառայող դատապարտվել է

սպառնալիքներ, որպեսզի ստիպեն նրանց հայտարարություն անել կամ գործել որպես ոստիկանությանը տեղեկություններ հաղորդող: Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում անցկացրած ժամանակահատվածին, ապա հարցված անձանցից որևէ մեկը չի բողոքել ֆիզիկական վատ վերաբերմունքից:		ազատազրկման, 1 ծառայողենթարկվել է կալանքի, իսկ 2 ծառայողի նկատմամբ վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան:
Իսկապես, պատվիրակության բացահայտումները 2010 թվականի այցելությունից մատնանշում են, որ անհրաժեշտ են ոստիկանության օպերատիվ անձնակազմի և հարցաքննողների խորացված վերապատրաստումներև կասկածյալների՝ ոստիկանության կողմից իրականացվող հարցաքննությունների ընթացակարգի և կարգավորումների վերանայում:	Մասնավորապես, բարելավված նախնական և ընթացիկ վերապատրաստում պետք է մատուցվի դատական իրեղեն ապացույցները կալանքի տակ վերցնելու, փաթեթավորելու, պահելու և գնահատելու, և դրա հետ կապված այլ հարցերի վերաբերյալ: Այնուհետև, պետք է կատարվեն ներդրումներ, որպեսզի այնպիսի ժամանակակից գիտական միջոցները, ինչպիսիք են ԴՆԹ տեխնոլոգիան և մատնադրոշմների ավտոմատ նույնականացման համակարգը, նույնպես հասանելի լինեն: Հանձնաժողովը առաջարկում է, որ այս նկատառումները հաշվի առնվեն ոստիկանության բարեփոխման հետագա նախագծերի իրականացման ժամանակ:	
Ուշ 2007 թվականին հիմնվեց առանձին մարմին՝ Հատուկ Քննչական Ծառայություն		

(ՀՔԾ), որը մասնագիտանում է այն դեպքերի քննության մեջ, որոնք կապված են պետական պաշտոնայաների կողմից լիազորությունների չարաշահման հետ: 2010 թվականի այցելության պահին, թվում էր, թե ՀՔԾ-անձնակազմը բավարար է և կարող են ներգրավվել աշխատակիցներ այլ գործակալությունների անձնակազմից, որպեսզի նրանք աշխատեն իր ղեկավարության տակ: Պատվիրակությունն եկավ այն եզրակացության, որ ՀՔԾ կողմից իրականացված գործողությունը Վահան Քահլաֆյանի գործի նախնական քննության փուլում արագ էր և լիակատար, չնայած ռեսուրսների սահմանափակությանը և դժվարություններին, որոնք հանդիպում են այդ տիպի քննությունների ժամանակ: Այս գործի համար պատասխանատու ՀՔԾ ավագ քննիչը սիստեմատիկ էր գործում և պարզ ու հստակ դիրքորոշում ուներ իր դերի մասին:		

	կրկնում է իր առաջարկությունը, որ դատավորներին հիշեցվի գերագույն դատական իշխանությունների կողմից, և/կամ, եթե անհրաժեշտ է, համապատասխան իրավական պայմանների միջոցով, որ նրանք պետք է քայլեր ձեռնարկեն, երբ որ նրանց ներկայացած անձը հայտարարում է, որ ենթարկվել է բռնության ոստիկանության կողմից: Նույնիսկ վատ վերաբերմունքի հայտարարության բացակայության դեպքում, դատավորը պետք է ապահովի դատաբժշկական քննություն, երբ դրա համար առկա են այլ հիմքեր (օր. տեսանելի վնասվածքներ, մարդու ընդհանուր տեսքը կամ պահելաձևը):	
	Առաջարկում է, որ վերանայվի էլեկտրահարող սարքերի կիրառումը վերը նշված դիտողությունների լույսի ներքո: Համապատասխան օրենքները և կարգավորումները պետք է համապատասխանաբար բարեփոխվեն:	Հատուկ միջոցների, այդ թվում՝ էլեկտրահարող սարքերի կիրառման վերաբերյալ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում 2010թ. դեկտեմբերի 22-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝ արգելվել է ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի՝ կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր

		են: Բացի այդ, մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու պարտականությունը օրենքով վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը: Օրենքով հստակեցվել են նաեւ էլեկտրահարող սարքերի, կայծային պարպիչների կիրառման հիմքերը (տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը):
	Առաջարկում է, որ քայլեր ձեռնարկվեն վերանայելու համար վերապատրաստումները, ոստիկանության հարցաքննությունների ընթացակարգը և կարգավորումները նախորդող դիտողությունների լույսի ներքո: Զուգահեռաբար, պետք է կազմակերպվի հատուկ վերապատրաստում ներգրավված ոստիկանների համար հարցաքննության առաջատար, ճանաչված և ընդունելի հնարքների մասին: Անձի մասին տեղեկությունները ուսումնասիրելու հնարավորությունը (այդ թվում ոստիկանության հետ նախկին շփումը և համապատասխան պատմությունը) պետք է հասանելի լինի ոստիկանությանը նախքան հարցաքննությունը: Այնուհետև, որպես կանոն, ոստիկանության հարցաքննությունները պետք է անցկացվեն մեկ կամ երկու քննիչների կողմից, սենյակներում,	ՀՀ ոստիկանության համակարգում փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ, փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ծառայողների վերապատրաստման, մասնագիտական որակների բարձրացման և կատարելագործման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 01.02.2011 թ. թիվ 8-5 ցուցումի համաձայն ՀՀ ոստիկանության քննչական և հետաքննական լիազորություններ ունեցող ծառայողները սահմանված գրաֆիկին համապատասխան, տեղերում պետք է մասնակցեն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին: Բացի այդ,

	որոնք հատուկ համալրված են սարքավորումներով և նախագծված են այդ նպատակի համար: Նաև պետք է իրականացվի ոստիկանության հարցաքննության չափանիշների և ընթացակարգերի շարունակական դիտարկում; դա կպահանջի ոստիկանության հարցաքննությունների ճշգրիտ ձայնագրում, որը հնարավորության դեպքում, պետք է կատարվի էլեկտրոնային (այսինքն, ձայնային և/կամ նախընտրելի է վիդեո) ձայնագրող սարքավորումների միջոցով: Պետք է նաև պահանջվի, որ սիստեմատիկ գրանցվի հարցաքննությունների սկիզբն ու ավարտը, կալանավորի ցանկացած պահանջ հարցաքննության ընթացքում:	նշված ծառայողների տեսագործնական գիտելիքները բարելավելու նպատակով ՀՀ ոստիկանության Ակադեմիայում կազմակերպվում են վերապատրաստման ամենամյա դասընթացներ: Ինչ վերաբերում է հարցաքննության տեխնիկայի կատարելագործմանը, ապա ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի 27-րդ կետով նախատեսված է ստեղծել հայելապատ սենյակներ, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 209-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննվող անձի ցանկությամբ հարցաքննության ընթացքը կարող է ձայնագրվել:
	Վատ վերաբերմունքից բողոքող անձանց համար պետք է ապահովվի անմիջական, գաղտնի հասանելիություն ՀՔԾ:	
	Առաջարկում է հատուկ շեշտադրություն դնել ՀՔԾ կառուցվածքային անկախության և հանրային վստահությունը բարձրացնելու համար թափանցիկ ընթացակարգերի առկայության վրա:	
Որպես արդյունք,շատ կալանավորված անձինք, որոնց հետ խոսել է պատվիրակությունը, հնարավորություն չեն ունեցել օգտվել այդ իրավունքից մինչև կալանքի մասին արձանագրության	Կրկնում է այն առաջարկը,որն արվել է 2008թ. այցելության վերաբերյալ զեկույցում. ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որպեսզի ձերբակալված բոլոր անձինք իրենց ազատության սահմանափակման պահից սկսած արդյունավետորեն օգտվեն ձերբակալման մասին	Իրոք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և ՀՀ քր. դատ. օր.-ի 63-րդ հոդվածների միջև առկա է հակասություն. մի դեպքում սահմանված է ծանուցման 3 ժամ, մյուս դեպքում՝ ոչ ուշ, քան 12 ժամ: Հակասությունն

կազմելը (որը, գործնականում, կարող էր կատարվել ձերբակալությանը հաջորդող երեք օրվա ընթացքում) կամ մինչև այն ժամանակը, երբ նրանք ընդունվում էին կալանավորված անձանց պահելու վայր կամ ներկայացվում են դատարանին:	տեղեկացնելու իրավունքից: Այդ իրավունքից օգտվելը պետք է գրավոր արձանագրվի մատյանում կամ այլ կերպ (օր. ցանկացած հապաղում պետք է գրանցվի՝ նշելով դրա պատճառները և պետք է պահանջի գործի հետ կապ չունեցող ոստիկանության ավագ սպայի կամ դատախազի հավանությունը) և պետք է հստակ ժամանակային սահմանափակում ունենա:	անհրաժեշտ է վերացնել ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություն կատարելով: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ օրենսդրական նման կոլիզիայի դեպքում գործում է ձերբակալվածի համար առավել բարենպաստ նորմը՝ այսինքն 3 ժամյա ծանուցման դրույթը: ՀՀ ոստիկանությունը երախտապարտ կլիներ, որպեսզի ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չծանուցման դեպքերի վերաբերյալ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի պատվիրակությունը իրազեկեր ՀՀ ոստիկանությանը՝ ծառայողական քննություններ անցկացնելու նպատակով:
Այցելությունից հետո, 2010 թ, սեպտեմբերի 6-ի նամակով, Հայաստան-յան իշխանությունները նշում էին, որ 2010 թ. ապրիլի 6–ին ընդունվել են հատուկ ոստիկա-նական հրահանգներ, որպեսզի ապահովեն, որ ձերբակալված անձանց հնարավորություն տրվի, որպեսզի փաստաբանը ներկա լինի ոստիկանու-թյան ցանկացած հարցա-քննության ժամանակ, որը կանցկացվի նախքան կալանքի մասին արձանագրության կազմելը:	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ապահովել ազատությունից զրկված անձանց կողմից փաստաբանի օգնությունից արդյունավետորեն օգտվելու իրավունքը՝ ոստիկանության կողմից նրանց ազատության սահմանափակման պահից: Անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական դրույթները պետք է լրացվեն:	Ինչ վերաբերում է բերման ենթարկված եւ ձերբակալված անձանց ծանուցված լինելու եւ փաստաբան ունենալու իրավունքի իրացման խնդրին, ապա ՀՀ ոստիկանության պետի 03.04.2010թ. թիվ 12-Ց ցուցումով ՀՀ ոստիկանության հետաքննություն իրակա-նացնող ստորաբաժանումների պետերին հանձնարարվել է՝ 1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի հիմքով բերման ենթարկված անձանց խնդրանքով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները փաստաբան հրավիրելու

		համար, 2) բերման ենթարկվածին հնարավորություն ընձեռել բացատրություն տալ փաստաբանի մասնակցությամբ, եթե մինչեւ ձերբակալման արձանագրություն կազմելը կամ խափանման միջոց ընտրելը անհրաժեշտություն է առաջացել անձից վերցնել բացատրություն կամ անցկացնել օպերատիվ հարցում, 3) անշեղորեն պահպանել ՀՀ կառավարության 14.06.2007թ. «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշման այլ պահանջները: Ներկայումս ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ թվարկված իրավական ակտերի անշեղ կատարումն ապահովելու ուղղությամբ:
Պատվիրակությունը տեղեկացվել էր, որ այժմ վկաներն իրավունք ունեին, որպեսզի հարցաքննության համար ոստիկանություն գնալիս նրանց ուղեկցի փաստաբան: Այնուամենայնիվ, 2010թ. այցելությունից պարզ դարձավ, որ այս հնարավորությունը չի բացատրվել որպես վկա ներգրավված անձանց:	Առաջարկում է, որ ոստիկանություն հրավիրված վկաները սիստեմատիկ կերպով տեղեկացվեն այն իրավունքի մասին, որ ցանկացած ոստիկանության հարցաքննության ժամանակ իրենց կարող է ուղեկցել իրենց ընտրությամբ փաստաբան:	Փաստաբանի ներկայությամբ վկայի հարցաքննության իրավունքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված է, սակայն, հաշվի առնելով մի շարք եվրոպական երկրների իրավական ակտերի վերլուծության արդյունքները, հնարավոր է ընդլայնել փաստաբանի դատավարական լիազորությունների շրջանակը (վկայի հարցաքննության

		ժամանակ)՝ վկաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ուժեղացնելու համար:
Ի պատասխան, Հայաստանի իշխանությունները նշեցին, որ Արդարադատության Նախարարությունը և Փաստաբաների պալատ ստեղծել են աշխատանքային խումբ Փաստաբանության մասին օրենքի իրականացումը բարեփոխելու և հնարավոր բարեփոխումները քննարկելու նատակով:		
Օրենսդրության մեջ չեն կատարվել փոփոխություններ, որոնք կապահովեն այս իրավունքը կիրառումը փաստացի ազատազրկման պահից:	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին քայլեր ձեռնարկել, ներառյալ օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ բժշկի ծառայությունից օգտվելու իրավունքը կիրառվում է փաստացի ազատազրկման պահից:	«Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն «ձերբակալված անձը իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին»: Ինչ վերաբերում է ձերբակալվածին դատաբժշկի կողմից զննվելուն, ապա նույն օրենքի 15 հոդվածի համաձայն «ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը
Ավելին, այցելության ժամանակ պարզվել է, որ բժշկական քննությունը հաճախ անց է կացվել ոստիկանության անձնակազմի ներկայությամբ, և որ բժշկական հետազոտության արդյունքները հասանելի են եղել ոչ բժշկական անձնակազմին:	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին, քայլեր ձեռնարկել, այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ կալանավորված անձի բժշկական հետազոտությունը պետք է կատարվի ոստիկանության աշխատակիցների լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս:	
	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին, քայլեր	

	ձեռնարկել, այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ ցանկացած հետազոտության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի ցանկացած համապատասխան հայտարարություն և բժշկի եզրակացությունները, պետք է պաշտոնապես գրանցվեն բժշկի կողմից և մատչելի լինեն կալանավորին, իսկ պահանջի դեպքում, նաև նրա փաստաբանին:	իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն»: ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝«Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի: Հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաեւ ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչեւ բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաեւ տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում, անձնական գործում եւ դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաեւ քրեական վարույթն իրականացնող մարմնին»: Ի դեպ, «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ձերբակալված
	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել քայլեր , այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ երբ բժշկի կողմից արձանագրվում են վնասվածքներ, որոնք կարող են հնարավոր բռնությունների արդյունք լինել, արձանագրված դեպքերը պետք է սիստեմատիկ կերպով ներկայացվեն համապատասխան դատախազի ուշադրությանը:	
	Երբ կալանավորված անձը հայտարարում է վնսավածքների և վատ վերաբերմունքի մասին, նա պետք է անհապաղ զննվի անկախ բժշկի կողմից, ով ունի համապատասխան դատական ուսուցում և ով պետք է եզրահանոգումներ կատարի հայտարարությունների և օբյեկտիվ բժշկական տվյալների/հայտնաբերությունների համապատասխանության մասին: Կալանավորված անձը իրավունք պետք է ունենա ստանալ նման բուժզննում առանց քննիչի, դատախազի,կամ դատավորի կողմից նախնական լիազորության:	
	Քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու համար, որ	

	խստագույն պահպանվի բժշկական թղթաբանության գաղտնիությունը: Բնականաբար, բուժսպասարկման անձնակազմը, որը զննում է ոստիկանության կողմից կալանավորված անձանց, կարող է անհրաժեշտության դեպքում տեղեկացնել ոստիկաններին կալանավորված անձի առողջության վիճակի մասին, այդ թվում ընդունվող դեղերի և կոնկրետ առողջության ռիսկերի մասին:	անձը իրավունք ունի իր իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին:
Կարևոր է համարում, որ ոստիկանության կալանավորվածների պահելու վայրերում աշխատող բուժսպասարկման անձնակազմը հնարավորինս տեղեկացված լինի լայն		

հասարակությունում բուժսպասարկման հիմնական տենդենցներին:		
Այցելության ընթացքում պարզ դարձավ, որ իրավունքների մասին տեղեկատվությունը դեռևս չէր տրամադրվում ազատազարկման հենց սկզբից: Շատ հարցաքննված անձինք նշեցին, որ նրանց չեն բացատրել իրենց իրավունքները նախքան կալանքի արձանագրության կազմելը, նախքան ոստիկանության կալանավայր բերվելը, կամ դատարան ներկայացվելը: Այցելած ոստիկանության բաժանմունքներում առկա իրավունքների մասին ձևերը սովորաբար հայերեն էին, բայց փաստացի ոչ մեկը, ում հետ խոսել էր պատվիրակությունը, չէր ստացել պատճեն: Ինչ վերաբերում է կալանքի մասին արձանագրությանը, նրանք սահմանափակվեցին որոշակի իրավական պայմաններ վկայակոչելով (մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգիրք մաս 63-2 (4)	Կրկնում է իր առաջարկությունը, որն արվել է 2008թ. Այցելության վերաբերյալ զեկույցում, որ իրավունքների մասին տեղեկատվությունը պետք է բանավոր կերպով սիստեմատիկ տրվի ոստիկանության կողմից բերման ենթարկված բոլոր անձանց նրանց փաստացի ազատազրկման հենց սկզբից: Ինչ վերաբերում է իրավունքների մասին ձևերին, այն պետք է սիստեմատիկ տրվի բոլոր կալանավորված անձանց հենց որ նրանք բերվում են ոստիկանության բաժանմունք և պետք է հասանելի լինեն բոլոր համապատասխան լեզուներով:	ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ /բուկլետներ/:

փաստաբանի ծառայությունից օգտվելու մասին); այս առումով, ստուգված արձանագրություններում կալանավորի ստորագրությունը հաճախ առկա չէր իրավունքներին վերաբերող վերնագրերի տակ: Այնուհետև, օտարազգի անձինք սովորաբար չէին ստանում գրավոր տեղեկատվություն իրենց իրավունքների մասին իրենց հասկանալի լեզվով:		
	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ապահովել, որ կալանավորման մասին բոլոր գրանցումները պատշաճ կերպով կատարվեն, ճշգրիտ գրանցվեն փաստացի կալանավորման ժամանակը, ընդունումը, խուց տեղափոխումը, ազատումը կամ տեղափոխումը և արտացոլեն կալանքի բոլոր մյուս կողմերը (կոնկրետ վայրև, որտեղ պահվում է կալանավորված անձը, փաստաբանի, ազգականի, բժշկի կամ հյուպատոսության աշխատակցի այցելությունները; խցից դուրս բերելը հարցաքննության համար, ցանկացած դեպք կապված կալանավորված անձի հետ և այլն.): Այնուհետև, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն առաջարկում է, որպեսզի իրավազոր դատախազները և ոստիկանության ավագ պաշտոնյաները արդյունավետ	ՀՀ կառավարության 05.06.2008 թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման համաձայն ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր ձերբակալվածի վերաբերյալ հերթապահի կողմից գրանցումներ է կատարվում «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանում, որտեղ նշվում է ձերբակալվածի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, բնակության վայրը, ում կողմից է ձերբակալվել, ՁՊՎ ընդունելու հիմքը, ձերբակալման ամսաթիվը եւ ժամանակը, նախկին

	վերահսկողություն սահմանեն կալանավորվածներին պահելու վայրերում գրանցումների ճշգրտության նկատմամբ:	դատվածությունը, նշումներ ձերբակալվածի տեղաշարժի մասին եւ ՁՊՎ-ից ազատելու հիմքը, ամսաթիվը, ժամը: Բացի այդ յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ, որում ներառվում են ձերբակալման եւ ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի եւ անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը եւ ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր: ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի համաձայն ՁՊՎ-ների գրանցամատյաններում եւ ձեւաթղթերում թերություններով լրացումները հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության: ՁՊՎ-ները ոստիկանության առավել թափանցիկ վայրերն են, որտեղ գործող օրենսդրության համաձայն
	որպեսզի իրավազոր դատախազները և ոստիկանության ավագ պաշտոնյաները արդյունավետ վերահսկողություն սահմանեն կալանավորվածներին պահելու վայրերում գրանցումների ճշգրտության նկատմամբ:	

		իրենց լիազորությունների սահմաններում հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններն ու կազմակերպությունները առանձնակի ուշադրություն են դարձնում գրանցամատյան-ների ճիշտ լրացմանը: Նշված գործառույթի բարելավումը գտնվում է ոստիկանության ղեկավարության վերահսկողության ներքո: Ներդրվում է գերատեսչական ցանց, որով նախատեսվում է ավտոմատացնել նշված պրոցեսը, ինչը հնարավորություն կտա իրական հսկողություն սահ-մանել ձերբակալված անձանց պահման ժամկետների, նրանց տեղաշարժերի նկատմամբ:
	Առաջարկում է ընդլայնել Ոստիկանության Հանրային Դիտարկման Խմբի մանդատը, որպեսզի ընդգրկի ցանկացած ոստիկանության տարածք, որտեղ անձինք կարող են զրկված լինել իրենց ազատությունից, նույնիսկ կարճ ժամանակահատվածով:	Հաշվի առնելով, որ ոստիկանության ստորաբա-ժանումներում բերման ենթարկված անձինք կարող են գտնվել 3 ժամից ոչ ավելի /ՀՀ քր. դատ. օր.-ի 131.1 հոդված/ ուստի հասարակական մշտադիտարկման խմբին ոստիկանության բաժիններ կոնկրետ փաստերով մուտք գործելու թույլտվությունը իրատեսական չէ: Բացի այդ, նշված խմբի գործունեությունը կարող է խոչընդոտել քննությանը, «տաք հետքերով» հանցագործության բացահայտմանը, խախտել նախաքննության տվյալների գաղտնիության սկզբունքը:

Այցելած կալանավորվածների պահելու վայրերը, այդ թվում Սևանի Ոստիկանական Բաժանմունքը, վերանորոգվել էին և ընդհանուր առմամբ կալանավորների համար առաջարկում էին խուցերի լավ նյութակենցաղային պայմաններ: Խուցերը բավարար չափի էին(օր. միհոգանոց խցերը առնվազն 6 մ², իսկ երկու հոգանոց 9-ից 13.5 մ²) և պատշաճ կերպով համալրված էին սարքավորումներով (օր. մահճակալներ, սեղան, աթոռներ, լվացարան): Կալանավորներն ապահովված էին պատշաճ անկողնային պարագաներով գիշերելու համար, կարող էին հեշտությամբ օգտվել զուգարանից, կարող էին պարբերաբար լոգանք ընդունել և ապահովված էին հիգիենայի տարրական պարագաներով: Ինչ վերաբերում է սննդին, կարգավորումներ էին կատարվել կալանավորներին 3 անգամյա սննդով ապահովելու համար, այդ թվում մեկ տաք ճաշով: Այնուհետև,	Ներքոհիշյալ թերությունները վերացվեն. պատվիրակությունը նկատեց, որ այցելած կալանավորվածների պահելու վայրերի մեծ մասում բնական լուսավորման մակարդակը որոշ չափով սահմանափակ էր (օր. Երևանում, Չարենցավանում, Մարտունիում, Սևանում և Վարդենիսում), պատուհանների փոքր չափերի պատճառով, որոնք երբեմն ծածկված էին մետաղյա ցանցերի մի քանի շերտով: Այնուհետև, Գավառի կալանավորվածների պահելու վայրերերում խուցերը վատ էին օդափոխվում, իսկ, հասարակական զուգարանները կեղտոտ էին:	ՁՊՎ-ների շիանարարական առնձնահատկությունները սահմանված են ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշմամբ: Հարկ է նշել, որ ոստիկանությունում գործող ՁՊՎ-ների մեծ մասը ունի կառուցման 30-40 տարվա վաղեմություն, ուստի ՁՊՎ-ներում պայմանների բարելավելը կպահանջի ֆինանսական մեծ ներդրումներ:

ոստիկանության կալանավորվածներին պահելու բոլոր վայրերն ունեին բացօթյա վարժանքի համար բակեր (32-ից 80 մ² չափերի, ներառյալ ծածկած տարածք) և հարցված կալանավորները հաստատեցին, որ նրանք ամեն օր հնարավորություն ուներին օգտվել դրանցից: Այցելած մի քանի հաստատություններում կալանավորներին հասանելի էր նաև ընթերցելու նյութեր և ռադիոընդունիչներ:		
	Կրկնում է իր առաջարկությունը, որ կալանավորվածների պահելու վայրերում 24 ժամից ավել պահված ցանակացծ անձ հնարավորություն ունենա առնվազն 1 ժամ բացօթյա վարժանք կատարել ամեն օր:	Ինչ վերաբերվում է զբոսանքի տևողությանը, ապա գործող օրենսդրության համաձայն այն պետք է լինի 1 ժամից ոչ պակաս, սակայն որոշ դեպքերում ընդառաջելով ձերբակալվածի ցանկությանը, այն կարող է կրճատվել, ինչի մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:
	Կոչ է անում Հայաստանյան իշխանությունների անհապաղ քայլեր ձեռնարկել, որպեսզի բանտախցերում կալանքի տակ պահվելու ժամանակահատվածը չգերազանցի 3 օր:	ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում մինչեւ 3 ժամ պահելու համար նախատեսված խցերը նախատեսված չեն գիշերելու համար, սակայն այն դեպքերում, երբ իրավախախտի անձը նշված ժամկետում հնարավոր չի

		լինում պարզել, ապա այդ ժամկետը կարող է երկարել: Նշված խնդիրը իր լուծումը կստանա ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի շրջանակներում: /Տե՛ս, նաեւ զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները/:
Խոշտանգումների կանխարգելման կոմիտե, 2010		
Մեջբերումներ զեկույցից	**Առաջարկություններ**	**ՀՀ կառավարության պատասխանը**
Պարզվեց, որ 72 ժամվա սահմանափակումը հիմնականում պահպանվել է:	Քայլեր ձեռնարկել, որպեսզի ապահովեն, որ կալանքի մասին արձանագրությունը կազմվի առանց հապաղման, ձերբակալումից անմիջապես հետո: Այնուհետև, պետք է ձեռնարկվեն քայլեր ապահովելու համար, որ կալանքի մասին արձանագրությունները վերաբերում են ձերբակալման ժամանակին և ոստիկանության բաժանմունքին (ի լրումն կալանքի մասին արձանագրություն կազմելու սկզբի ժամանակի):	Դեռեւս 2006 թ. ոստիկանության իրավաստեղծ նախաձեռնությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվել է 131.1. հոդվածով, որը երաշխավորում է փաստացի ձերբակալված անձանց նկատմամբ 3 ժամվա ընթացքում քրեական գործ հարուցելու եւ դատավարական ձերբակալում իրականացնելու հնարավորությունը: Հարցի հետ ուղղակիորեն առնչվում է ոստիկանության կողմից կիրառվող բերման ենթարկելու գործողության իրավաչափությունը, որը գործնականում չի դիտվում իբրեւ ձերբակալում՝ դրանից բխող բացասական հետեւանքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

		ներկայումս մշակվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, բերման ենթարկելու պահից ձերբակալման արձանագրություն կազմելու գործընթացը կկանոնակարգվի նոր օրենսդրության շրջանակներում: Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն՝ կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ /բուկլետներ/:
2010 թ. այցելության ընթացքում պարզվեց, որ արգելանքի տակ վերցված անձանց մեծամասնությունը բանտ է տեղափոխվել 3 օրվա ընթացքում:		

	Հայաստանյան իշխանությունները ապահովեն, որ արգելանքի տակ գտնվող անձինք արագ տեղափոխվեն բանտ: Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի տեսակետով, ցանկացած հետագա անհրաժեշտ հարցաքննություն պետք է, որքանով որ դա հնարավոր է, կատարվի բանտում:	ՀՀ քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալված-ներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակ-ցության բացակայության պատճառով: Բացի այդ, «Ձերբակալված եւ կալանա-վորված անձանաց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդ-վածի համաձայն, քննչական գործողություններ կատարելու կապակցությամբ կալանավոր-վածներին պահելու վայրից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինու-թյան դեպքում քննիչի, դատա-խազի կամ դատարանի որոշ-մամբ կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբա-կալվածներին պահելու վայր՝ մինչեւ 3 օր տեւողությամբ: Նշված բացառիկ դեպքերից բացի, կալանավորված անձանց ՁՊՎ-ներում օրենքով նախատեսված ժամկետից ավել պահելու դեպքերը կանխելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի կողմից արձակվել են 29.01.2009 թ. թիվ 8-2 ցուցումը եւ 14.10.2009 թ. թիվ 2625-Ա հրամանը:

		Մասնավորապես, վերը նշված հարամանով ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները բացառելու համար՝ 1/ գիշերային ժամերին ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերից դուրս պահելու դեպքերը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի, 2/ գիշերային ժամերին հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց հետ օպերատիվ հարցումների կամ կասկածյալի /մեղադրյալի/ մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացումը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի, 3/ հանցանք կատարելու մեջ կասկածվող եւ բերված անձին առանց կասկածյալի դատավարական կարգավիճակի 3 ժամից ավելի պահելը, 4/ կալանավորված անձանց երեք օրվանից ավելի ձերբակալվածներին պահելու վայրերում պահելը, եթե դա պայմանավորված չէ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ օրենքի պահանջներին համապատասխան կալանավորվածներին պահելու այլ վայրեր տրանս-

		պորտային հաղորդակցության բացակայության պատճառով տեղափոխելու անհնարինությամբ:
	Առաջարկում է, որ Հայաստանյան իշխանությունները բոլոր ոստիկաններին հստակ ուղերձ հղի, շարունակական վերապատրաստման միջոցով, որ նրանք, ովքեր կչարաշահեն իրենց պաշտոնը, որպեսզի գումար ստանան ազատազրկման մեջ գտնվող մարդկանցից կամ նրանց բարեկամներից, կենթարկվեն քրեական պատասխանատվության: Առավել ընդհանուր, այս առումով վկայակոչվում են Կոռուպցիայի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի պետությունների խմբի առաջարկությունները:	Լիովին գիտակցելով խնդրո առարկայի կարևորությունը՝ ՀՀ ոստիկանության պետի 09.12.2009թ. թիվ 3140-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանությունում կոռուպ-ցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Միևնույն ժամանակ, ՀՀ ոստիկանության ղեկավա-րության նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության Ակադեմիայում եւ Ուսումնական կենտրոնում դասավանդվող առարկաների ցանկում ներառվել է «Ոստիկանության էթիկա» ուսումնական առարկան: Բացի այդ, թե՛ ՀՀ-ում և թե՛ արտասահմանյան մի շարք երկրներում ոստիկանության ծառայողները շարունակաբար մասնակցում են նմանատիպ թեմաներով կազմակերպվող դասընթացների: Նշված թեմաները ընդգրկված են նաեւ ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների թեմատիկ պլաններում: Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող

		բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվում է ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց: Այս ամենով հանդերձ, ՀՀ ոստիկանությունը հայտնում է իր պատրաստակամությունը ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսեւորումների վերաբերյալ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի պատվիրակության կողմից առարկայական տեղեկատվություն տրամադրելու դեպքում կատարել ծառայողական քննություններ եւ մեղավոր ծառայողներին ենթարկել համարժեք պատասխանատվության:
Պատվիրակությունը լսեց զգալի քանակով վստա-հելի և հետևողական հայտարարություններ կալանավորված անձանց հետ վերջերս պատահած ֆիզիկական վատ վերաբերմունքի մասին ոստիկանության օպերատիվ անձնակազ-մի, երբեմն էլ բարձրաս-տիճան սպաների կողմից, նախնական հարցաքննությունների	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին պարբերաբար բոլոր ոստիկաններին, հայտարարության ընդունման միջոցով, սկսած ամենաբարձր աստիճանից, «վատ վերաբերմունքի նկատմամբ զրո հանդուրժողականության» հստակ ուղերձ հղել: Որպես այդ հայտարարության մի մաս, պետք է պարզ դարձվի, որ ցանկացած ոստիկան, ով որևէ կերպ կկատարի, կօժանդակի և կդրդի կամ կհանդուրժի վատ	ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս՝ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական

ժամանակ (այսինքն, մինչև կալանքի մասին արձանագրության կազմելը): Բացի այդ, շատերը, այդ թվում նրանք, ովքեր հարցաքննվել են ոստիկանության կողմից որպես վկաներ, պնդեցին, որ նրանք ենթարկվել են հարցաքննության ճնշող մեթոդների (օր. երկարա-տև հարցաքննություն միաժամանակ մինչև 8 հարցաքննողի կողմից; ֆիզիկական վատ վերաբերմունքի կամ պատժի լինելու կամ ընտանիքի անդամների նկատմամբ հետևանքների սպառնալիքներ, որպեսզի ստիպեն նրանց հայտարարություն անել կամ գործել որպես ոստիկանությանը տեղեկություններ հաղորդող: Ինչ վերաբե-րում է քրեակատարողա-կան հիմնարկներում անցկացրած ժամանակահատվածին, ապա հարցված անձանցից որևէ մեկը չի բողոքել ֆիզիկական վատ վերաբերմունքից:	վերաբերմունք, խստորեն կպատժվի: Այնուհետ, ոստիկանության անձնակազմը պետք է հիշեցվի, որ պահանջվածից առավել ուժ չպետք է գործադրվի ձերբակալումն իրագործելիս և երբ ձերբակալված անձինք արդեն վերահսկողության տակ են վերցվել, չի կարող որևէ արդարացում լինել նրանց խբելու համար: Միևնույն ժամանակ, արգելանքի տակ գտնվող անձանց մարդկայնորեն վերաբերվելը պետք է հստակ ճանաչվի:	պատասխանատվության: Այսպես, 2010 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից եւ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ 81 բողոք /2009 թ.՝ 245/, որոնց քննությամբ հիմնավորվել են 19-ը /2009 թ.՝ 37/: Կատարված ծառայողական քննությունների արդյունքում ոստիկանության 23 ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության /2009 թ.՝ 51/, 4 ծառայող՝ քրեական պատասխանատվության /2009 թ.՝ 2/: Ի դեպ, քրեական պատասխանատվության կանչված 1 ոստիկանության ծառայող դատապարտվել է ազատազրկման, 1 ծառայողենթարկվել է կալանքի, իսկ 2 ծառայողի նկատմամբ վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան:

Իսկապես, պատվիրակության բացահայտումները 2010 թվականի այցելությունից մատնանշում են, որ անհրաժեշտ են ոստիկանության օպերատիվ անձնակազմի և հարցաքննողների խորացված վերապատրաստումներև կասկածյալների՝ ոստիկանության կողմից իրականացվող հարցաքննությունների ընթացակարգի և կարգավորումների վերանայում:	Մասնավորապես, բարելավված նախնական և ընթացիկ վերապատրաստում պետք է մատուցվի դատական իրեղեն ապացույցները կալանքի տակ վերցնելու, փաթեթավորելու, պահելու և գնահատելու, և դրա հետ կապված այլ հարցերի վերաբերյալ: Այնուհետև, պետք է կատարվեն ներդրումներ, որպեսզի այնպիսի ժամանակակից գիտական միջոցները, ինչպիսիք են ԴՆԹ տեխնոլոգիան և մատնադրոշմների ավտոմատ նույնականացման համակարգը, նույնպես հասանելի լինեն: Հանձնաժողովը առաջարկում է, որ այս նկատառումները հաշվի առնվեն ոստիկանության բարեփոխման հետագա նախագծերի իրականացման ժամանակ:	
Ուշ 2007 թվականին հիմնվեց առանձին մարմին՝ Հատուկ Քննչական Ծառայություն (ՀՔԾ), որը մասնագիտա-նում է այն դեպքերի քննության մեջ, որոնք կապված են պետական պաշտոնայաների կողմից լիազորությունների չարաշահման հետ: 2010 թվականի այցելության պահին, թվում էր, թե ՀՔԾ-անձնակազմը բավարար		

է և կարող են ներգրավ-վել աշխատակիցներ այլ գործակալությունների անձնակազմից, որպեսզի նրանք աշխատեն իր ղեկավարության տակ: Պատվիրակությունն եկավ այն եզրակացու-թյան, որ ՀՔԾ կողմից իրականացված գործողությունը Վահան Քահլաֆյանի գործի նախնական քննության փուլում արագ էր և լիակատար, չնայած ռեսուրսների սահմանա-փակությանը և դժվարություններին, որոնք հանդիպում են այդ տիպի քննությունների ժամանակ: Այս գործի համար պատասխանա-տու ՀՔԾ ավագ քննիչը սիստեմատիկ էր գործում և պարզ ու հստակ դիրքորոշում ուներ իր դերի մասին:		
	կրկնում է իր առաջարկությունը, որ դատավորներին հիշեցվի գերագույն դատական իշխանությունների կողմից, և/կամ, եթե անհրաժեշտ է, համապատասխան իրավական պայմանների միջոցով, որ նրանք պետք է քայլեր ձեռնարկեն, երբ որ նրանց ներկայացած անձը	

	հայտարարում է, որ ենթարկվել է բռնության ոստիկանության կողմից: Նույնիսկ վատ վերաբերմունքի հայտարարության բացակայության դեպքում, դատավորը պետք է ապահովի դատաբժշկական քննություն, երբ դրա համար առկա են այլ հիմքեր (օր. տեսանելի վնասվածքներ, մարդու ընդհանուր տեսքը կամ պահելաձևը):	
	Առաջարկում է, որ վերանայվի էլեկտրահարող սարքերի կիրառումը վերը նշված դիտողությունների լույսի ներքո: Համապատասխան օրենքները և կարգավորումները պետք է համապատասխանաբար բարեփոխվեն:	Հատուկ միջոցների, այդ թվում՝ էլեկտրահարող սարքերի կիրառման վերաբերյալ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում 2010թ. դեկտեմբերի 22-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝ արգելվել է ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի՝ կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Բացի այդ, մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման

		համար թույլատրելի չափանիշները սահմանելու պարտականությունը օրենքով վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը: Օրենքով հստակեցվել են նաեւ էլեկտրահարող սարքերի, կայծային պարպիչների կիրառման հիմքերը (տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը):
	Առաջարկում է, որ քայլեր ձեռնարկվեն վերանայելու համար վերապատրաստումները, ոստիկանության հարցաքննությունների ընթացակարգը և կարգավորումները նախորդող դիտողությունների լույսի ներքո: Զուգահեռաբար, պետք է կազմակերպվի հատուկ վերապատրաստում ներգրավված ոստիկանների համար հարցաքննության առաջատար, ճանաչված և ընդունելի հնարքների մասին: Անձի մասին տեղեկությունները ուսումնասիրելու հնարավորությունը (այդ թվում ոստիկանության հետ նախկին շփումը և համապատասխան պատմությունը) պետք է հասանելի լինի ոստիկանությանը նախքան հարցաքննությունը: Այնուհետև, որպես կանոն, ոստիկանության	ՀՀ ոստիկանության համակարգում փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ, փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ծառայողների վերապատրաստման, մասնագիտական որակների բարձրացման և կատարելագործման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 01.02.2011 թ. թիվ 3-5 ցուցումի համաձայն ՀՀ ոստիկանության քննչական և հետաքննական լիազորություններ ունեցող ծառայողները սահմանված գրաֆիկին համապատասխան, տեղերում պետք է մասնակցեն «Փորձաքննությունների

	հարցաքննությունները պետք է անցկացվեն մեկ կամ երկու քննիչների կողմից, սենյակներում, որոնք հատուկ համալրված են սարքավորումներով և նախագծված են այդ նպատակի համար: Նաև պետք է իրականացվի ոստիկանության հարցաքննության չափանիշների և ընթացակարգերի շարունակական դիտարկում; դա կպահանջի ոստիկանության հարցաքննությունների ճշգրիտ ձայնագրում, որը հնարավորության դեպքում, պետք է կատարվի էլեկտրոնային (այսինքն, ձայնային և/կամ նախընտրելի է վիդեո) ձայնագրող սարքավորումների միջոցով: Պետք է նաև պահանջվի, որ սիստեմատիկ գրանցվի հարցաքննությունների սկիզբն ու ավարտը, կալանավորի ցանկացած պահանջ հարցաքննության ընթացքում:	ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին: Բացի այդ, նշված ծառայողների տեսագործնական գիտելիքները բարելավելու նպատակով ՀՀ ոստիկանության Ակադեմիայում կազմակերպվում են վերապատրաստման ամենամյա դասընթացներ: Ինչ վերաբերում է հարցաքննության տեխնիկայի կատարելագործմանը, ապա ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի 27-րդ կետով նախատեսված է ստեղծել հայելապատ սենյակներ, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 209-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննվող անձի ցանկությամբ հարցաքննության ընթացքը կարող է ձայնագրվել:
	Վատ վերաբերմունքից բողոքող անձանց համար պետք է ապահովվի անմիջական, գաղտնի հասանելիություն ՀՔԾ:	
	Առաջարկում է հատուկ շեշտադրություն դնել ՀՔԾ կառուցվածքային անկախության և հանրային վստահությունը բարձրացնելու համար թափանցիկ ընթացակարգերի առկայության վրա:	

Որպես արդյունք,շատ կալանավորված անձինք, որոնց հետ խոսել է պատվիրակությունը, հնարավորություն չեն ունեցել օգտվել այդ իրավունքից մինչև կալանքի մասին արձանագրության կազմելը (որը, գործնականում, կարող էր կատարվել ձերբակալությանը հաջորդող երեք օրվա ընթացքում) կամ մինչև այն ժամանակը, երբ նրանք ընդունվում էին կալանավորված անձանց պահելու վայր կամ ներկայացվում են դատարանին:	Կրկնում է այն առաջարկը,որն արվել է 2008թ. այցելության վերաբերյալ զեկույցում. ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որպեսզի ձերբակալված բոլոր անձինք իրենց ազատության սահմանափակման պահից սկսած արդյունավետորեն օգտվեն ձերբակալման մասին տեղեկացնելու իրավունքից: Այդ իրավունքից օգտվելը պետք է գրավոր արձանագրվի մատյանում կամ այլ կերպ (օր. ցանկացած հապաղում պետք է գրանցվի՝ նշելով դրա պատճառները և պետք է պահանջի գործի հետ կապ չունեցող ոստիկանության ավագ սպայի կամ դատախազի հավանությունը) և պետք է հստակ ժամանակային սահմանափակում ունենա:	Իրոք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և ՀՀ քր. դատ. օր.-ի 63-րդ հոդվածների միջեւ առկա է հակասություն. մի դեպքում սահմանված է ծանուցման 3 ժամ, մյուս դեպքում՝ ոչ ուշ, քան 12 ժամ: Հակասությունն անհրաժեշտ է վերացնել ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություն կատարելով: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ օրենսդրական նման կոլիզիայի դեպքում գործում է ձերբակալվածի համար առավել բարենպաստ նորմը՝ այսինքն 3 ժամյա ծանուցման դրույթը: ՀՀ ոստիկանությունը երախտապարտ կլիներ, որպեսզի ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չծանուցման դեպքերի վերաբերյալ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի պատվիրակությունը իրազեկեր ՀՀ ոստիկանությանը՝ ծառայողական քննություններ անցկացնելու նպատակով:
Այցելությունից հետո, 2010 թ, սեպտեմբերի 6-ի նամակով,	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ապահովել ազատությունից զրկված անձանց	Ինչ վերաբերում է բերման ենթարկված եւ ձերբակալված անձանց ծանուցված

Հայաստանյան իշխանությունները նշում էին, որ 2010 թ. ապրիլի 6–ին ընդունվել են հատուկ ոստիկանական հրահանգներ, որպեսզի ապահովեն, որ ձերբակալված անձանց հնարավորություն տրվի, որպեսզի փաստաբանը ներկա լինի ոստիկանության ցանկացած հարցաքննության ժամանակ, որը կանցկացվի նախքան կալանքի մասին արձանագրության կազմելը:	կողմից փաստաբանի օգնությունից արդյունավետորեն օգտվելու իրավունքը՝ ոստիկանության կողմից նրանց ազատության սահմանափակման պահից: Անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական դրույթները պետք է լրացվեն:	լինելու եւ փաստաբան ունենալու իրավունքի իրացման խնդրին, ապա ՀՀ ոստիկանության պետի 03.04.2010թ. թիվ 12-Ց ցուցումով ՀՀ ոստիկանության հետաքննություն իրականացնող ստորաբաժանումների պետերին հանձնարարվել է՝ 1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի հիմքով բերման ենթարկված անձանց խնդրանքով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները փաստաբան հրավիրելու համար, 2) բերման ենթարկվածին հնարավորություն ընձեռել բացատրություն տալ փաստաբանի մասնակցությամբ, եթե մինչեւ ձերբակալման արձանագրություն կազմելը կամ խափանման միջոց ընտրելը անհրաժեշտություն է առաջացել անձից վերցնել բացատրություն կամ անցկացնել օպերատիվ հարցում, 3) անշեղորեն պահպանել ՀՀ կառավարության 14.06.2007թ. «Մարդու իրավունքների ու ազատությունների

		սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշման այլ պահանջները: Ներկայումս ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ թվարկված իրավական ակտերի անշեղ կատարումն ապահովելու ուղղությամբ:
Պատվիրակությունը տեղեկացվել էր, որ այժմ վկաներն իրավունք ունեին, որպեսզի հարցաքննության համար ոստիկանություն գնալիս նրանց ուղեկցի փաստաբան: Այնուամենայնիվ, 2010թ. այցելությունից պարզ դարձավ, որ այս հնարավորությունը չի բացատրվել որպես վկա ներգրավված անձանց:	Առաջարկում է, որ ոստիկանություն հրավիրված վկաները սիստեմատիկ կերպով տեղեկացվեն այն իրավունքի մասին, որ ցանկացած ոստիկանության հարցաքննության ժամանակ իրենց կարող է ուղեկցել իրենց ընտրությամբ փաստաբան:	Փաստաբանի ներկայությամբ վկայի հարցաքննության իրավունքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված է, սակայն, հաշվի առնելով մի շարք եվրոպական երկրների իրավական ակտերի վերլուծության արդյունքները, հնարավոր է ընդլայնել փաստաբանի դատավարական լիազորությունների շրջանակը (վկայի հարցաքննության ժամանակ)՝ վկաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ուժեղացնելու համար:
Ի պատասխան, Հայաստանի իշխանությունները նշեցին, որ Արդարադատության Նախարարությունը և Փաստաբանների պալատ		

ստեղծել են աշխատանքային խումբ Փաստաբանության մասին օրենքի իրականացումը բարեփոխելու և հնարավոր բարեփոխումները քննարկելու նատակով:		
Օրենսդրության մեջ չեն կատարվել փոփոխություններ, որոնք կապահովեն այս իրավունքը կիրառումը փաստացի ազատազրկման պահից:	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին քայլեր ձեռնարկել, ներառյալ օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ բժշկի ծառայությունից օգտվելու իրավունքը կիրառվում է փաստացի ազատազրկման պահից:	«Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն «ձերբակալված անձը իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին»: Ինչ վերաբերում է ձերբակալվածին դատաբժշկի կողմից զննվելուն, ապա նույն օրենքի 15 հոդվածի համաձայն «ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն»: ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ «Ձերբակալվածի մոտ մարմնական
Ավելին, այցելության ժամանակ պարզվել է, որ բժշկական քննությունը հաճախ անց է կացվել ոստիկանության անձնակազմի ներկայությամբ, և որ բժշկական հետազոտության արդյունքները հասանելի են եղել ոչ բժշկական անձնակազմին:	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին, քայլեր ձեռնարկել, այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ կալանավորված անձի բժշկական հետազոտությունը պետք է կատարվի ոստիկանության աշխատակիցների լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս:	
	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին, քայլեր ձեռնարկել, այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ ցանկացած հետազոտության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի	

	ցանկացած համապատասխան հայտարարություն և բժշկի եզրակացությունները, պետք է պաշտոնապես գրանցվեն բժշկի կողմից և մատչելի լինեն կալանավորին, իսկ պահանջի դեպքում, նաև նրա փաստաբանին:	վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի: Հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաեւ ձերբակալ-ված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչեւ բժշկի կողմից հակառակը չպահան-ջելը՝ նաեւ տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատ-յանում, անձնական գործում եւ դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաեւ քրեական վարույթն իրականացնող մարմնին»: Ի դեպ, «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համա-ձայն ձերբակալված անձը իրավունք ունի իր իրավունք-ների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով,
	Կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել քայլեր , այդ թվում օրենսդրական բնույթի, որպեսզի հստակ լինի, որ երբ բժշկի կողմից արձանագրվում են վնասվածքներ, որոնք կարող են հնարավոր բռնությունների արդյունք լինել, արձանագրված դեպքերը պետք է սիստեմատիկ կերպով ներկայացվեն համապատասխան դատախազի ուշադրությանը:	
	Երբ կալանավորված անձը հայտարարում է վնասվածքների և վատ վերաբերմունքի մասին, նա պետք է անհապաղ զննվի անկախ բժշկի կողմից, ով ունի համապատասխան դատական ուսուցում և ով պետք է եզրահանգումներ կատարի հայտարարությունների և օբյեկտիվ բժշկական տվյալների/հայտնաբերությունների համապատասխանության մասին: Կալանավորված անձը իրավունք պետք է ունենա ստանալ նման բուժզննում առանց քննիչի, դատախազի,կամ դատավորի կողմից նախնական լիազորության:	
	Քայլեր պետք է ձեռնարկվեն	

	ապահովելու համար, որ խստագույն պահպանվի բժշկական թղթաբանության գաղտնիությունը: Բնականաբար, բուժսպասարկման անձնակազմը, որը զննում է ոստիկանության կողմից կալանավորված անձանց, կարող է անհրաժեշտության դեպքում տեղեկացնել ոստիկաններին կալանավորված անձի առողջության վիճակի մասին, այդ թվում ընդունվող դեղերի և կոնկրետ առողջության ռիսկերի մասին:	ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածնե-րին պահելու վայրի վարչա-կազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմին-ներին, հասարակական միավորումներին և կուսակ-ցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրա-վունքների եւ ազատություն-ների պաշտպանության միջ-ազգային մարմիններին կամ կազմակերպություններին:
Կարևոր է համարում, որ ոստիկանության կալանավորվածների պահելու վայրերում աշխատող բուժսպասարկման անձնակազմը հնարավորինս տեղեկացված լինի լայն հասարակությունում բուժսպասարկման հիմնական տենդենցներին:		
Այցելության ընթացքում պարզ դարձավ, որ իրավունքների մասին	Կրկնում է իր առաջարկությունը, որն արվել է 2008թ. Այցելության վերաբերյալ զեկույցում, որ	ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների

տեղեկատվությունը դեռևս չէր տրամադրվում ազատազարկման հենց սկզբից: Շատ հարցաքննված անձինք նշեցին, որ նրանց չեն բացատրել իրենց իրավունքները նախքան կալանքի արձանագրության կազմելը, նախքան ոստիկանության կալանավայր բերվելը, կամ դատարան ներկայացվելը: Այցելած ոստիկանության բաժանմունքներում առկա իրավունքների մասին ձևերը սովորաբար հայերեն էին, բայց փաստացի ոչ մեկը, ում հետ խոսել էր պատվիրակությունը, չէր ստացել պատճեն: Ինչ վերաբերում է կալանքի մասին արձանագրությանը, նրանք սահմանափակվեցին որոշակի իրավական պայմաններ վկայակոչելով (մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգիրք մաս 63-2 (4) փաստաբանի	իրավունքների մասին տեղեկատվությունը պետք է բանավոր կերպով սիստեմատիկ տրվի ոստիկանության կողմից բերման ենթարկված բոլոր անձանց նրանց փաստացի ազատազրկման հենց սկզբից: Ինչ վերաբերում է իրավունքների մասին ձևերին, այն պետք է սիստեմատիկ տրվի բոլոր կալանավորված անձանց հենց որ նրանք բերվում են ոստիկանության բաժանմունք և պետք է հասանելի լինեն բոլոր համապատասխան լեզուներով:	շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ /բուկլետներ/:

ծառայությունից օգտվելու մասին); այս առումով, ստուգված արձանագրություններում կալանավորի ստորագրությունը հաճախ առկա չէր իրավունքներին վերաբերող վերնագրերի տակ: Այնուհետև, օտարազգի անձինք սովորաբար չէին ստանում գրավոր տեղեկատվություն իրենց իրավունքների մասին իրենց հասկանալի լեզվով:		
	կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ապահովել, որ կալանավորման մասին բոլոր գրանցումները պատշաճ կերպով կատարվեն, ճշգրիտ գրանցվեն փաստացի կալանավորման ժամանակը, ընդունումը, խուց տեղափոխումը, ազատումը կամ տեղափոխումը և արտացոլեն կալանքի բոլոր մյուս կողմերը (կոնկրետ վայրև, որտեղ պահվում է կալանավորված անձը, փաստաբանի, ազգականի, բժշկի կամ հյուպատոսության աշխատակցի այցելությունները; խցից դուրս բերելը հարցաքննության համար, ցանկացած դեպք կապված կալանավորված անձի հետ և այլն.): Այնուհետև, Խոշտանգումների	ՀՀ կառավարության 05.06.2008 թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման համաձայն ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր ձերբակալվածի վերաբերյալ հերթապահի կողմից գրանցումներ է կատարվում «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանում, որտեղ նշվում է ձերբակալվածի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը,

	կանխարգելման կոմիտեն առաջարկում է, որպեսզի իրավազոր դատախազները և ոստիկանության ավագ պաշտոնյաները արդյունավետ վերահսկողություն սահմանեն կալանավորվածներին պահելու վայրերում գրանցումների ճշգրտության նկատմամբ:	բնակության վայրը, ում կողմից է ձերբակալվել, ՁՊՎ ընդունելու հիմքը, ձերբակալման ամսաթիվը եւ ժամանակը, նախկին դատվածությունը, նշումներ ձերբակալվածի տեղաշարժի մասին եւ ՁՊՎ-ից ազատելու հիմքը, ամսաթիվը, ժամը: Բացի այդ յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ, որում ներառվում են ձերբակալման եւ ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի եւ անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը եւ ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր: ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի համաձայն
	որպեսզի իրավազոր դատախազները և ոստիկանության ավագ պաշտոնյաները արդյունավետ վերահսկողություն սահմանեն կալանավորվածներին պահելու վայրերում գրանցումների ճշգրտության նկատմամբ:	

		ՀՊՎ-ների գրանցամատյաններում եւ ձեւաթղթերում թերություններով լրացումները հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության: ՀՊՎ-ները ոստիկանության առավել թափանցիկ վայրերն են, որտեղ գործող օրենսդրության համաձայն իրենց լիազորությունների սահմաններում հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններն ու կազմակերպությունները առանձնակի ուշադրություն են դարձնում գրանցամատյանների ճիշտ լրացմանը: Նշված գործառույթի բարելավումը գտնվում է ոստիկանության ղեկավարության վերահսկողության ներքո: Ներդրվում է գերատեսչական ցանց, որով նախատեսվում է ավտոմատացնել նշված պրոցեսը, ինչը հնարավորություն կտա իրական հսկողություն սահմանել ձերբակալված անձանց պահման ժամկետների, նրանց տեղաշարժերի նկատմամբ:
	Առաջարկում է ընդլայնել Ոստիկանության Հանրային	Հաշվի առնելով, որ ոստիկանության

	Դիտարկման Խմբի մանդատը, որպեսզի ընդգրկի ցանկացած ոստիկանության տարածք, որտեղ անձինք կարող են զրկված լինել իրենց ազատությունից, նույնիսկ կարճ ժամանակահատվածով:	ստորաբաժանումներում բերման ենթարկված անձինք կարող են գտնվել 3 ժամից ոչ ավելի /ՀՀ քր. դատ. օր.-ի 131.1 հոդված/ ուստի հասարակական մշտադիտարկման խմբին ոստիկանության բաժիններ կոնկրետ փաստերով մուտք գործելու թույլտվությունը իրատեսական չէ: Բացի այդ, նշված խմբի գործունեությունը կարող է խոչընդոտել քննությանը, «տաք հետքերով» հանցագործության բացահայտմանը, խախտել նախաքննության տվյալների գաղտնիության սկզբունքը:
Այցելած կալանավորվածների պահելու վայրերը, այդ թվում Սևանի Ոստիկանական Բաժանմունքը, վերանորոգվել էին և ընդհանուր առմամբ կալանավորների համար առաջարկում էին խուցերի լավ նյութակենցաղային պայմաններ: Խուցերը բավարար չափի էին(օր. միհոգանոց խցերը	Ներքոհիշյալ թերությունները վերացվեն. պատվիրակությունը նկատեց, որ այցելած կալանավորվածների պահելու վայրերի մեծ մասում բնական լուսավորման մակարդակը որոշ չափով սահմանափակ էր (օր. Երևանում, Չարենցավանում, Մարտունիում, Սևանում և Վարդենիսում), պատուհանների փոքր չափերի պատճառով, որոնք երբեմն ծածկված էին մետաղյա ցանցերի մի քանի շերտով: Այնուհետև,	ՁՊՎ-ների շիանարարական առնձնահատկությունները սահմանված են ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշմամբ: Հարկ է նշել, որ ոստիկանությունում գործող ՁՊՎ-ների մեծ մասը ունի կառուցման 30-40 տարվա վաղեմություն, ուստի ՁՊՎ-ներում պայմանների բարելավելը կպահանջի ֆինանսական մեծ ներդրումներ:

առնվազն 6 մ², իսկ երկու հոգանոց 9-ից 13.5 մ²) և պատշաճ կերպով համալրված էին սարքավորումներով (օր. մահճակալներ, սեղան, աթոռներ, լվացարան): Կալանավորներն ապահովված էին պատշաճ անկողնային պարագաներով գիշերելու համար, կարող էին հեշտությամբ օգտվել զուգարանից, կարող էին պարբերաբար լոգանք ընդունել և ապահովված էին հիգիենայի տարրական պարագաներով: Ինչ վերաբերում է սննդին, կարգավորումներ էին կատարվել կալանավորներին 3 անգամյա սննդով ապահովելու համար, այդ թվում մեկ տաք ճաշով: Այնուհետև, ոստիկանության կալանավորվածներին պահելու բոլոր վայրերն ունեին բացօթյա վարժանքի համար բակեր (32-ից 80 մ² չափերի, ներառյալ ծածկած տարածք) և հարցված կալանավորները	Գավառի կալանավորվածների պահելու վայրերերում խուցերը վատ էին օդափոխվում, իսկ, հասարակական զուգարանները կեղտոտ էին:	

հաստատեցին, որ նրանք ամեն օր հնարավորություն ուներին օգտվել դրանցից: Այցելած մի քանի հաստատություններում կալանավորներին հասանելի էր նաև ընթերցելու նյութեր և ռադիոընդունիչներ:		
	Կրկնում է իր առաջարկությունը, որ կալանավորվածների պահելու վայրերում 24 ժամից ավել պահված ցանակացծ անձ հնարավորություն ունենա առնվազն 1 ժամ բացօթյա վարժանք կատարել ամեն օր:	Ինչ վերաբերվում է զբոսանքի տևողությանը, ապա գործող օրենսդրության համաձայն այն պետք է լինի 1 ժամից ոչ պակաս, սակայն որոշ դեպքերում ընդառաջելով ձերբակալվածի ցանկությանը, այն կարող է կրճատվել, ինչի մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:
	Կոչ է անում Հայաստանյան իշխանությունների անհապաղ քայլեր ձեռնարկել, որպեսզի բանտախցերում կալանքի տակ պահվելու ժամանակահատվածը չգերազանցի 3 օր:	ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում մինչեւ 3 ժամ պահելու համար նախատեսված խցերը նախատեսված չեն գիշերելու համար, սակայն այն դեպքերում, երբ իրավախախտի անձը նշված ժամկետում հնարավոր չի լինում պարզել, ապա այդ ժամկետը կարող է երկարել: Նշված խնդիրը իր լուծումը կստանա ՀՀ քրեական

		դատավարության նոր օրենսգրքի շրջանակներում: /Տե՛ս, նաեւ զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները/: